

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Երեւանի Պատասխանը Մինսկի Խուճբին Եւ Այլոց

Ստեփանակերտի մէջ կայացաւ աննախընթաց հանդիպում: Համատեղ նիստ գումարեցին Հայկական երկու հանրապետութիւններու Ազգային Անվտանգութեան Խորհուրդները, որուն կը մասնակցէին Հայաստանի եւ Արցախի առաջին դէմքերը եւ ապահովութեան կառոյցներու ղեկավարները: Այս նիստը կը յաջորդէր Փաշինեան-Ալիեւ սպասուող հանդիպումէն առաջ ԵԱԿԿ Մինսկի Խուճբի համաձայնագրահներու տարածած այն յայտարարութեան, ուր ներկայացուած էին բանակցային սկզբունքներ, որոնց շարքին Արցախի շուրջ գտնուող տարածքներու վերադարձը Ատրպէյճանի վերահսկողութեան տակ: Յայտարարութեան մէջ ակնարկ կար նաեւ բանակցութիւններու ձաւաչափը փոխելու շուրջ Հայաստանի առաջարկին, զայն նկատելով անպատեհ:

Առաջին անգամ ըլլալով Արցախի մայրաքաղաքին մէջ նման նիստի կայացումով յստակ պատգամներ կ'ուղղէր բազմաթիւ կողմերու: Ժողովի սեղանին գլուխը վարչապետ Նիկոլ Փաշինեանն ու նախագահ Սահակեանը կողք-կողքի նստելով կ'ուղէին հասկնալի միջազգային հանրութեան, որ Հայաստանն ու Արցախը համահաւասար պետութիւններ են, որոնց հետ պէտք է բանակցիլ առանձին-առանձին: Աւելին, Փաշինեան իր ներածական գրաւոր ելոյթին մէջ մանրամասն բացատրեց, թէ ինչու ինք լիազօրուած չէ բանակցելու Արցախի ժողովուրդի անունով եւ չունի նման մանտաթ: Մինսկի Խուճբի անդամները, որքան որ ալ խօսին ձեւաչափը փոխելու ոչ նպատակայարմարութեան մասին, այսուհանդերձ Հայաստանը կը մնայ իր տեսակետին վրայ, թէ Արցախի վերադարձը բանակցային սեղան անխուսափելի է եւ այդ հարցը պէտք է լուծուի ստանայ՝ ու թէ կանուխ:

### Պոլսոյ Պատրիարք՝ Մերոպ Մուրաֆեանի Թաղումը Տեղի Պիտի Ունենայ Մարտ 17-ին

Երկարատեւ ու ծանր հիւանդութենէ ետք, 62 տարեկան հասակին, Մարտ 8-ին վախճանեցաւ Պոլսոյ Հայոց 84-րդ պատրիարք Մերոպ արքեպիսկոպոս Մուրաֆեանը:

Պոլսոյ «Ժամանակ» օրաթերթը կը հաղորդէ, որ պատրիարք Մուրաֆեանի յուղարկաւորութեան կազմակերպման համար յանձնաժողով ձեւաւորուած է:

Պատրիարքի յուղարկաւորութիւնը պիտի կատարուի Մարտի 17-ին: Պատրիարք Մերոպ Մուրաֆեանի Մարմինը նախ պիտի փոխադրուի Գում Գաբուի աթոռանիստ Սուրբ Աստուածածին մայր եկեղեցի, եւ պոլսահայերը հնարաւորութիւն պիտի ունենան վերջին հրաժեշտը տալու պատրիարքին:

Պատրիարքի յուղարկաւորութեան կը սպասուի աշխարհի տարբեր երկիրներէ հոգեւորականներու, ինչպէս նաեւ Թուրքիոյ քաղաքական վերնախաւի ներկայացուցիչներու ներկայութիւնը:

Թուրքիոյ նախագահ Ռեճէպ Թայէպ էրտողանը գանգած է Պոլսոյ Հայոց պատրիարքի փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթէշեանին եւ ցաւակցութիւն յայտնած Պատրիարքի կորուստի կապակցութեամբ:

Թուրքիոյ խորհրդարանի

## Ստեփանակերտի Մէջ Կայացաւ Հայաստանի Եւ Արցախի Անվտանգութեան Խորհուրդներու Համատեղ Նիստը

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Արցախի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեանի համաձայնագրահներու Մարտ 12-ին Ստեփանակերտի մէջ կայացաւ Հայաստանի եւ Արցախի Անվտանգութեան Խորհուրդներու համատեղ նիստ: Օրակարգի հիմնական թեման կը վերաբերէր Լեւոնալին Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգաւորման գործընթացին ներկայ իրավիճակի համատեղ գնահատման եւ համակարգուած գործողութիւններու ուղղութեամբ:

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը եւ Արցախի նախագահ Բակո Սահակեանը մինչ օրակարգային հարցերու քննարկումը հանդէս եկած են ելոյթներով:

ՀՀ վարչապետը ողջունելով Հայաստանի եւ Արցախի Անվտանգութեան Խորհուրդներու համատեղ նիստը, ընդգծած է, որ այն աննախադէպ իրադարձութիւն է եւ ունի «չափ խորհրդանշական եւ միւս կողմէն՝ շատ յստակ իմաստ»:

«Մանչեսթըր»-ը կը հաղորդէ, որ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան յարաբերութիւնները թեւակոխուած են որակապէս մի նոր փուլ: Թէ առաջիկայում ուրիշ ինչպիսի դրսեւորումներ կարող է ունենալ այդ փուլը, թերեւս մեր այսօրուայ քննարկման կարեւորագոյն թեմաներից է», - ըսած է Փաշինեանը:

«2018 թ. դեկտեմբերի 9-ին Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններից յետոյ սա իմ առաջին այցն է Արցախի Հանրապետութիւն, եւ ուզում եմ ընդգծել, որ խորհրդարանական ընտրութիւններում «Իմ քայլը» դաշինքը Հայաստանի ժողովուրդից ուժեղ մանտաթ է ստացել՝ Արցախի Հանրապետութեան ներկայութեան մակարդակը բարձացնելու Արցախեան հիմնահարցի կարգաւորման բանակցային գործընթացում Արցախի՝ որպէս



Հայաստանի վարչապետն ու Արցախի նախագահը կը գլխաւորեն Անվտանգութեան Խորհուրդներու համատեղ նիստը

Ներկայումս Հայաստանը ունի «չափ խորհրդանշական եւ միւս կողմէն՝ շատ յստակ իմաստ»:

«Մանչեսթըր»-ը կը հաղորդէ, որ Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան յարաբերութիւնները թեւակոխուած են որակապէս մի նոր փուլ: Թէ առաջիկայում ուրիշ ինչպիսի դրսեւորումներ կարող է ունենալ այդ փուլը, թերեւս մեր այսօրուայ քննարկման կարեւորագոյն թեմաներից է», - ըսած է Փաշինեանը:

«2018 թ. դեկտեմբերի 9-ին Հայաստանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրութիւններից յետոյ սա իմ առաջին այցն է Արցախի Հանրապետութիւն, եւ ուզում եմ ընդգծել, որ խորհրդարանական ընտրութիւններում «Իմ քայլը» դաշինքը Հայաստանի ժողովուրդից ուժեղ մանտաթ է ստացել՝ Արցախի Հանրապետութեան ներկայութեան մակարդակը բարձացնելու Արցախեան հիմնահարցի կարգաւորման բանակցային գործընթացում Արցախի՝ որպէս

ղովրդից ուժեղ մանտաթ է ստացել՝ Արցախի Հանրապետութեան ներկայութեան մակարդակը բարձացնելու Արցախեան հիմնահարցի կարգաւորման բանակցային գործընթացում Արցախի՝ որպէս

Շար.ը էջ 5

### Արդարութեան Քայլարշաւ Դէպի Թրքական Հիւպատոսարան

Հարաւային Քալիֆորնիոյ հայ համայնքէն ներս գործող 21 կրօնական, քաղաքական, երիտասարդական, բարեգործական, մարզական եւ հասարակական կազմակերպութիւնները համախմբող մարմինը (AGC) յայտարարեց, որ Հայոց ցեղասպանութեան տարեկիցին առթիւ Ապրիլի 24, 2019-ի ժամը 1-ին տեղի պիտի ունենայ արդարադատութեան ամենամեայ քայլարշաւը դէպի Wilshire Boulevard-ի վրայ գտնուող թրքական հիւպատոսարանը՝ պահանջելու արդարութիւն Հայոց ցեղասպանութեան համար:

Շարունակելով հայկական պահանջները ուղղակիօրէն Լոս Անճելըսի մէջ գործող Թուրքիայի պաշտօնական կառավարութեան ներկայացուցչին պարզելու աւանդույթը, Հայոց Տեղասպանութեան Մարմինը ջանասիրաբար կ'աշխատի Արդարադատութեան Քայլարշաւը կազմակերպելու ուղղութեամբ եւ կոչ կ'ընէ համայնքի բոլոր հատուածներուն մասնակցելու սոյն միջոցառման:

Քայլարշաւի մանրամասնութիւնները պիտի հաղորդուին յառաջիկայ շաբաթներուն:

Լրացուցիչ տեղեկութիւններ կարելի է գտնել AGC-ի կայքէջին վրայ՝ [www.March4Justice.com](http://www.March4Justice.com) եւ կամ Armenian Genocide Committee-ի ֆէյսպուքեան էջով եւ կամ զանգահարելով (888) 924-1915:



Պոլսոյ Հայոց պատրիարք Մերոպ արքեպիսկոպոս Մուրաֆեան

«Ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան» պատգամաւոր Կարօ Փալանը «Թուրքերեան» իր էջին վրայ գրած է. - «Մերոպ պատրիարքը մեր յիշողութեան մէջ պիտի մնայ որպէս անմոռանալի հոգեւոր առաջնորդ»:

2008 թուականէն ի վեր Պատրիարք Մերոպ Մուրաֆեանը կը տառապէր անբուժելի հիւանդութեամբ եւ բժշկական

# ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## ԵԱՅԿ Մինսկի Խուճըրը Սեղանին Տեսնում է Կազանի Փաստաթուղթը

### ԹԱԹՈՒԼ ՅԱԿՈԲԵԱՆ

ԵԱԶԿ Մինսկի խմբի համանախազահները վերջին յայտարարություններից պարզում է, որ դարաբաղեան կարգաւորման սեղանին կազանի փաստաթուղթն է, կամ միջազգային միջնորդները ձգտում են, որ սեղանին մնայ հենց այդ փաստաթուղթը:

Աշխատանքային այդ փաստաթուղթը, որպէս բանակցութիւնների հիմք, վերապահումներով ժամանակին ընդունել է Հայաստանը եւ մերժել՝ Ատրպէյջանը:

Կազանի փաստաթուղթը, ինչպէս եւ դրան նախորդած Մադրիդեան տեքստը, հիմնուած են հիմնականում 4 սկզբունքների վրայ: Համեմատութեան մէջ, անկասկած, կազանի առաջարկները հայկական կողմի/երի համար աւելի անընդունելի են, քան Մադրիդեան տեքստն է, որը Պրահեան գործընթացի վերջնական իրաւագրութիւն է, եւ Երեւանին ու Պաքուին ներկայացուել է 2007-ի Նոյեմբերին:

Հակառակ նրան, որ Մադրիդեան եւ Կազանեան առաջարկները տարբեր ժամանակներում քննադատուել են եւ անընդունելի համարուել Ատրպէյջանում, Արցախում եւ Հայաստանում, միջնորդները դրանք համարում են փոխգիշտումների վրայ հիմնուած եւ հակամարտող կողմերի նուագագոյն պահանջներն ու ակնկալիքները բաւարարող տեքստ:

Պատահական է, որ այդ տեքստը՝ տարբեր փոփոխութիւններով, սեղանի վրայ է աւելի քան 10 տարի: Ղարաբաղեան հակամարտութեան բանակցային գործընթացի պատմութեան մէջ չկայ որեւէ այլ արաջարկ, որն այդքան երկար մնացած լինի սեղանին:

Կազանի աշխատանքային փաստաթղթով Հայաստանին եւ Ատրպէյջանին առաջարկուում է.

1. Լեռնային Ղարաբաղի շրջակայ տարածքների վերադարձ ատրպէյջանական վերահսկողութեանը,

2. Լեռնային Ղարաբաղի համար միջանկեալ կարգավիճակ, որն

ապահովում է անվտանգութեան եւ ինքնակառավարման երաշխիքներ,

3. Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղի իրար կապող միջանցք,

4. Լեռնային Ղարաբաղի վերջնական իրաւական կարգավիճակի նետազայ որոշում՝ իրաւական պարտադիր ուժ ունեցող կամ արտաշայտութիւն:

Որպէսզի հասկանալի լինի Մադրիդեան տեքստի եւ Կազանի առաջարկների տարբերութիւնը, ներկայացնենք Մադրիդեանի 4 հիմնարար սկզբունքները.

1. Լեռնային Ղարաբաղի վերջնական իրաւական կարգավիճակը կ'որոշուի պլեբիսցիտի միջոցով, որը Լեռնային Ղարաբաղի բնակչութեանը ընձեռում է կամքի ազատ եւ իրական արտայայտում: Պլեբիսցիտի ժամկէտներն ու մանրամասները կողմերը կը համաձայնեցնեն ապագայ բանակցութիւններում: Պլեբիսցիտի ընթացքում հարցի կամ հարցերի ձեւակերպման սահմանափակում չի լինելու եւ կարող է թոյլ տալ իւրաքանչիւր կարգավիճակի հնարաւորութիւն:

2. Միջանկեալ ժամկէտի ընթացքում, մինչեւ Լեռնային Ղարաբաղի վերջնական իրաւական կարգավիճակի որոշումը, վերջինիս բնակիչները կ'ունենան որոշակի իրաւունքներ եւ արտօնութիւններ...

- Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը իրաւունք է ունենալու ընտրելու իշխանութեան մարմիններ՝ միջանկեալ շրջանում Լեռնային Ղարաբաղը կառավարելու համար:

- Լեռնային Ղարաբաղի միջանկեալ իշխանութիւնները կարող են ունենալ դիտորդի կարգավիճակ ԵԱԶԿ այն նստաշրջաններում, որոնցում քննարկոււմ են անմիջականորէն Լեռնային Ղարաբաղի վերաբերող հարցեր: Նրանք կարող են անդամակցել միջազգային այն կազմակերպութիւններին, որոնցում միջազգայնորէն ճանաչուած լինելու կարգավիճակը նախապայման է:

3. Լեռնային Ղարաբաղին յա-

րակից ատրպէյջանական բոլոր տարածքները, որոնք գտնուում են հայկական վերահսկողութեան տակ, վերադարձուելու են ատրպէյջանական վերահսկողութեան տակ:

- Հայկական ուժերը դուրս են բերուում Քելբաշարի շրջանից:

- Քելբաշարի շրջանը գտնուելու է միջազգային անցումային յանձնաժողովի մոնիտորինգի տակ՝ ԵԱԶԿ յանձնաժողովի միջոցով, որը ներառելու է հայ եւ ատրպէյջանցի ներկայացուցիչներ:

- Ատրպէյջանական ներքին տեղահանուած անձանց թոյլ կը տրուի վերադառնալ Քելբաշարի շրջան խաղաղութեան համաձայնագրի ուժի մէջ մտնելուց հինգ տարի անց:

4. Համաձայնեցուած լայնքի միջանցքը պէտք է Լեռնային Ղարաբաղը կապի Հայաստանի հետ: Մինչեւ Լեռնային Ղարաբաղի վերջնական իրաւական կարգավիճակի որոշումը, այդ միջանցքը գտնուելու է Լեռնային Ղարաբաղի ժամանակաւոր իշխանութիւնների վերահսկողութեան տակ: Լեռնային Ղարաբաղի վերջնական իրաւական կարգավիճակի որոշումից նետոյ միջանցքի օգտագործման գործընթացը կը կարգաւորուի՝ հաշուի առնելով Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը:

Եթէ նկատուում էք՝ Մադրիդեան փաստաթղթում, որպէս առաջին կէտ նշուած է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը եւ օգտագործուած է պլեբիսցիտ տերմինը, մինչդեռ Կազանի տեքստում կարգավիճակը նշուած է չորրորդ կէտում, իսկ պլեբիսցիտ իրաւական ուժ ունեցող բառի փոխարէն գրուած է «պարտադիր ուժ ունեցող կամարտայայտութիւն» ձեւակերպումը:

Կազանի փաստաթուղթը, կարելի է ասել, Մադրիդեան սկզբունքների հենքով բանակցուած աշխատանքային տարբերակներից մէկն է, որը մերժել է Ատրպէյջանը:

2016-ի Նոյեմբերին Սերժ Սարգսեանը մի հարցազրոյցում խոստովանեց, որ ինքն ու իջամ Ալիբեր 2008-ից նետոյ մի քանի

անգամ մտ տես եղել փաստաթուղթ ստորագրելուն, սակայն ամէն անգամ Ալիբեր վերջին պահին հրաժարուել է:

«Հայկական կողմը, հայկական կողմերը՝ Լեռնային Ղարաբաղը եւ Հայաստանը, թողնում են այն տարածքները, որոնք այսօր զբաղեցուած են որպէս անվտանգութեան գոտի: Այսինքն, այն տարածքները, որոնք ատրպէյջանցիները համարում են գրաւեալ՝ 7 ատրպէյջանական շրջաններ: Մենք թողնում ենք այդ տարածքները եւ հեռանում- 2011-ին, կարծես, թոււմ էր, մենք պատրաստ ենք ստորագրել այդ փաստաթուղթը: Ռուսաստանի նախագահը, բացելով այդ հանդիպումը, ասաց, որ շատ լաւ է, որ հասանք այս օրը, որ խաղաղ համաձայնագիր է: Ելոյթ ունեցաւ Ռուսաստանի արտգործնախարար Լաւրովը: Ապա ելոյթ ունեցաւ Ատրպէյջանի նախագահը, ասաց, որ, իհարկէ, ուզում են, որ լուծուի լինի խաղաղ ճանապարհով, բայց դեռ հարցեր ունեն: Եթէ չեն սխալուում, թուարկեց 8 թէ 9 կէտեր»:

Այսպիսով, ի տարբերութիւն Սերժ Սարգսեանի, շաբաստանի ներկայ իշխանութիւնները դեռ չեն ընդունել Կազանի առաջարկները որպէս բանակցութիւնների հիմք:

Իր յայտարարութեամբ ԵԱԶԿ Մինսկի խումբը շեշտում է, որ ցանկալի է բանակցային ձեւաչափի որեւէ փոփոխութիւն: Սա, անշուշտ, ուղղուած է հայկական կողմին, աւելի յստակ՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանին, որը մի քանի անգամ ընդգծել է, որ ինքը չի կարող բանակցել Արցախի փոխարէն, եւ որ Արցախի ներգրաւումը բանակցութիւններում անհրաժեշտութիւն է:

«Միվիլնիթ»

## Այո, Կայ Համազգային Նպատակների Իրագործման Օրակարգ

### ԷՂԻԿ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը Սպահանի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ յայտարարեց, որ այլևս չկան Հայաստանի եւ սփռուած օրակարգեր, այլ կայ համազգային նպատակների իրագործման օրակարգ: Սա, մեր կարծիքով, թերեւս, յետընտրական շրջանում Փաշինեանի արած ամենահասկանալի, ամենապատասխանատու եւ ամենակարեւոր յայտարարութիւնն է:

Թոււմ է՝ առաջին հայեացքից, վերացական բան կայ «համազգային նպատակների իրագործման օրակարգ» արտայայտութեան մէջ, բայց միւս կողմից էլ՝ աշխարհում չկայ մի ազգ, որ առաջ է ընթանում առանց իր համազգային նպատակները սահմանելու եւ դրանց համեմատ՝ արտաքին ու ներքին քաղաքականութիւն իրականացնելու: Ֆրանսացիները, յոյները, գերմանացիները, հրեաները, ռուսները, ուղբեկները, վրացիները, թուրքները չենց այնպէս չեն ապրում այս արեւի տակ, եւ բոլորն էլ ունեն իրենց համազգային ծրագրերն ու

նպատակները: Հայերը միւսներից չեն կարող տարբերուել այս առումով: Մեր տարբերութիւնը, թերեւս, պատմականորէն պարտադրուած սփռուած իրաւունքներն են: Եւ, ասեմ, Փաշինեանը յայտարարում է, որ այլևս չկան Հայաստանի եւ սփռուած օրակարգեր, այլ կայ համազգային նպատակների իրագործման օրակարգ:

Անկեղծ է Փաշինեանը, թէ՛ ոչ, կը հասկանանք ապագայում, բայց նրա յայտարարութիւնը, պարզոււմ է, միանշանակ չի ընդունուել Հայաստանում: Տիգրան Վահանյան, օրինակ, «Հրապարակ» թերթում գրում է. «Որքան էլ ականջահանոյ հնչի այդ յայտարարութիւնը, իրականութիւնը լրիւ այլ է»: Ինչո՞ւ: «Հայաստանի եւ սփռուած օրակարգերը չեն կարող նոյնական լինել» յօդուածի ընթացումութիւնից պարզոււմ է, սակայն, որ հեղինակը բաւականին մշուշոտ պատկերացումներ ունի «համազգային նպատակներ» արտայայտութեան մասին:

Նրա կարծիքով՝ աշխարհի 70 երկրներում ապրող հայերի համար Հայաստանի հետ «համազգային

նպատակների իրագործման» նոյնական օրակարգ չի կարող լինել, եթէ այդ երկրների շահերը չեն համընկնում եւ անգամ հակադրուում են Հայաստանի շահերին: «Այդ երկրներում ապրող հայերը, որքան էլ լինեն էթնիկ հայ կամ իրենց ազգային ինքնութեանը եւ պատմական արմատներին նուիրուած, այդուհանդերձ, առաջին հերթին իրենց երկրների օրինապահ եւ օրինահարգ քաղաքացիներն են ու չեն կարող դուրս գալ իրենց երկրների քաղաքական գծից՝ յանուն Հայաստանի օրակարգի կամ շահերի», - գրում է հեղինակը՝ մեղանշելով հակառակը փաստող բազմաթիւ վկայութիւնների դէմ: Միւս կողմից էլ, նա «պետական քաղաքականութիւնն» ու «համազգային նպատակների իրագործումը» դիտարկում է որպէս նոյնական կատեգորիաներ, մինչդեռ, սովորաբար, առաջինը միշտ էլ բխում է երկրորդից եւ, ի տարբերութիւն երկրորդի, փոփոխական է: Ռազմավարութեան եւ մարտավարութեան շփոթի հետ գործ



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐ**  
ՊԱՇՏՕԱԹԵՐՈ՞  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԲՆԱՎԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.  
Please Send Address Change To **MASSIS WEEKLY**

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հաստատուած է Հայաստանի Կառավարութեան Նոր Կառուցուածքը

Գործադիրը հաւանութիւն տուած է «Կառավարութեան կառուցուածքի եւ գործունէութեան մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքին մէջ փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին նախագծին:

Կառավարութիւնը կազմուած պիտի ըլլայ վարչապետէ, երկու փոխվարչապետներէ եւ նախարարներէ: Ըստ նախագիծի՝ առաջին փոխվարչապետի պաշտօնը պիտի կրճատուի: 17 նախարարութեան փոխարէն պիտի սահմանուի 12 նախարարութիւն:

Կառավարութեան կառուցուածքին մէջ պիտի ընդգրկուին հետեւեալ նախարարութիւնները.

- 1) Աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութիւնը,
- 2) Առողջապահութեան նախարարութիւնը,
- 3) Արդարադատութեան նախարարութիւնը,
- 4) Արտակարգ իրավիճակներու նախարարութիւնը,
- 5) Արտաքին գործերու նախարարութիւնը,
- 6) Կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզութեան նախարարութիւնը,
- 7) Շրջակայ միջավայրի նախարարութիւնը,
- 8) Պաշտպանութեան նախարարութիւնը,
- 9) Տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքների նախարարութիւնը,

10) Բարձր արհեստագիտութիւններու արդիւնաբերութեան նախարարութիւնը,

11) Տնտեսութեան նախարարութիւնը,

12) Ելեմուտքի նախարարութիւնը:

Նախագիծի համաձայն՝ Սփիւռքի նախարարութիւնը պիտի վերակազմակերպուի եւ միանայ վարչապետի աշխատակազմին՝ ստեղծելով Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատարի գրասենեակ:

Նախարարութիւններու վերակազմակերպման գործընթացի սկզբնական արդիւնքով թուաքանակի աչլ փոփոխութիւն չի նախատեսուիր եւ միաձուլուող նախարարութիւնները իրենց բոլոր հաստիքներով պիտի տեղափոխուին նոր ստեղծուող նախարարութեան կազմ, բացառութեամբ վերը թուարկուած պաշտօնները, ինչպէս նաեւ՝ կրկնուող (աջակցող) ստորաբաժանումներու ղեկավար հաստիքները, որոնց պարագային կ'ակնկալուի նախատեսել աչլ՝ աւելի ցած մակարդակի հաստիք, քանի որ երկու կամ երեք ստորաբաժանման ղեկավար հնարաւոր չէ նախատեսել:

Արձագանգելով նախագիծին՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանը ըսած է, որ սա նախագիծ մըն է, որ շատոնց կը քննարկուէր եւ կրնան արձանագրել՝ հիմնական նախագիծը ընկալուած է հանրութեան կողմէ:

Արարատ Միրզոյեանը Քաղաքական Ուժերը Հրաւիրեց Միասնական Չանքերով Ընտրական Բարեփոխումներ Մշակելու

Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանը քաղաքական ուժերը խորհրդարանի ամպինէն հրաւիրած է միասնական ջանքերով ընտրական բարեփոխումներ մշակելու:

Նախորդ խորհրդարանի ժամանակ Ընտրական օրէնագիրքի բարեփոխումներու փաթեթի ընդունումը երկու անգամ տապալեցաւ՝ մեծամասամբ հանրապետականներու ջանքերով:

«Ընտրական հիմնարկները եւս ունեն կատարելագործման կարիք, եւ ես ուզում եմ օգտուել առիթից եւ քաղաքական ուժերին հրաւիրեմ ընտրական բարեփոխումների մշակման փուլ սկսելու՝ միասնական ջանքերով: Եւ ուզում եմ միանգամից յայտարարել, որ մենք չունենք այդ թւում եւ սահմանադրական սահմանափակումներ եւ խոչընդոտներ, այսինքն՝ գործող ունենք, բայց երբ մենք միասին պայմանաւորուենք, կարող ենք նաեւ աւելի արմատական փոփոխութիւններ մշակել եւ իրականացնել», - նշած է Միրզոյեանը:

«Իմ քայլը» խմբակցութեան Վահագն Յովակիմեանի խօսքով՝ կը հրաւիրեն թէ՛ խորհրդարանական, թէ՛ արտախորհրդարանական ուժերը: Յառաջիկային պիտի յտակցուի նաեւ ձեւաչափը՝ ուր եւ ինչպէս պիտի աշխատին: Ժամկէտներու սահմանափակում, ըստ



Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեան

Յովակիմեանի, չկայ, բայց ըսած է՝ իշխանութիւնը հաստատակամ է խորհրդարանական յաջորդ ընտրութիւնները արդէն բարելաւուած ընտրական օրէնսդրութեամբ իրականացնել:

«Հապճեպ ինչ-որ բաներ անելու խնդիր չունենք: Մեզ պէտք է մեր Ընտրական օրէնագիրքը եւ ընդհանրապէս նոյն կուսակցութիւնների մասին օրէնքը, այսինքն՝ քաղաքական դաշտը կարգաւորող օրէնսդրութիւնը յղկել եւ բերել այնպիսի վիճակի, որ դա նպաստի ամբողջ քաղաքական դաշտի զարգացմանը», - ըսած է Յովակիմեանը:

Նախկին Ուժերու Նպատակը Մէկ է՝ ԶԼՍ-ներով Ներկայ Իշխանութիւնը Բերել Գոնաժամի

«Կեղծ լուրերէն մինչեւ ատելութեան խօսք. անվերահսկելի մետախտարածք, թէ՛ վերահսկուող քարոզչութիւն» թեմայով կազմակերպուած քննարկման ժամանակ «Իրագեկ քաղաքացիներու միաւորում» ՀԿ ծրագրերու համակարգող Դանիէլ Իոաննիսեանը անդրադարձած է մետախտարածքի մէջ տարածուող կեղծ լուրերուն՝ նշելով, որ անոնք լրատուամիջոցներու մէջ շատ յաճախ տարբեր դրսեւորումներ կ'ունենան: «Կեղծ լուրերը յաճախ գուզորդուում են փաստերի հետ, յաճախ փաստերն են ակնյայտ կեղծ կերպով ներկայացուում: Այսինքն՝ կեղծ լուրերի դրսեւորումները շատ տարբեր են լինում եւ յաճախ հնարաւոր չի լինում այդ բոլոր դրսեւորումները ստուգել», - նկատած է Իոաննիսեանը:



«Իրագեկ քաղաքացիներու միաւորումի» համակարգող Դանիէլ Իոաննիսեան

«Իրագեկ քաղաքացիներու միաւորումի» թեմայով քննարկման ժամանակ ըսած է Երեւանի մամուլի ակումբի նախագահ Պորիս Նաւասարդեանը, ընդգծելով, որ քաղաքական ուժերը կը փորձեն ճգնաժամի մէջ ձգել նոր իշխանութիւնները: Խօսքի ազատութեան պաշտպանութեան կոմիտէի նախագահ Աշոտ Մելիքեանը իր քննարկման ժամանակ իր հերթին ըսած է. «Տեղեկատուական դաշտի ծայրայեղ քաղաքականացումը ըլլալու հանգամանքը մենք պէտք է դիտարկենք այն տեսանկիւնէն, որ լրատուամիջոցներու ճնշող մեծամասնութիւնը այսօր կամաց-կամաց լրատուամիջոցէ կը վերածուի քարոզչամիջոցի եւ այն քաղաքական ուժերը, որոնք քաղաքական դաշտի հիմնական խաղացողներն են, իրենց ենթակայ լրատուամիջոցները դարձուցած են քաղաքական համակարգի մէկ մաս»:

«Լիտիան»-ը Յայտարարած է Որ Կրնայ Դիմել Միջազգային Միջնորդութեան



«Լիտիան Ինթըրնաշնլ Լիմիթըտ» ընկերութեան Ամուլսարի ոսկիի հանքը

«Լիտիան Ինթըրնաշնլ Լիմիթըտ» ընկերութիւնը յայտարարած է, որ Ամուլսարի ոսկիի ծրագրի ճանապարհներու շարունակական շրջափակման կապակցութեամբ Lydian UK Corporation Limited եւ Lydian Canada Ventures Corporation ընկերութեան դուստր կազմակերպութիւնները պաշտօնապէս տեղեկ պահած են ՀՀ կառավարութեան, Մեծ Բրիտանիոյ եւ Հիւսիսային Իռլանտայի Միացեալ Թագաւորութեան եւ ՀՀ կառավարութեան միջեւ Ներդրումներու խրախուսման եւ պաշտպանութեան պայմանագրի եւ Գանատայի կառավարութեան եւ ՀՀ կառավարութեան միջեւ Ներդրումներու խրախուսման եւ պաշտպանութեան պայմանագրի շրջանակներուն ՀՀ կառավարութեան հետ վէճերու առ-

կայութեան մասին: Այս մասին կը յայտնեն ընկերութեան մամուլի ծառայութեան: Մեծ Բրիտանիոյ հետ երկկողմ համաձայնագրի շրջափակման ներս Lydian UK-ը կրնայ վէճը ներկայացնել միջազգային միջնորդութեան պաշտօնական ծանուցումէն 3 ամիսանց, իսկ Lydian Canada-ի հետ երկկողմ համաձայնագրի համաձայն՝ 6 ամիս անց: Միեւնոյն ժամանակ ՀՀ կառավարութեան համար բաց են Լիտիանի հետ առկայ վէճերը քննարկելու եւ արագ լուծումներ տալու հնարաւորութիւնները: Արդեօք Lydian UK-ը կամ Lydian Canada-ն կ'անցնին միջնորդային գործընթացին, այդ մէկը կախեալ է Հայաստանի կառավարութեան գործողութիւններէն:

**ԼՈՒՐԵՐ**

### Արցախը Կը Մեկնաբանէ ԵԱՀԿ Մինսքի Խումբի Յայտարարութիւնը

Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման միջնորդները, որչունելով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ միջեւ յառաջիկային սպասուող առաջին ուղիղ շփումներու պատրաստակամութիւնը, ընդգծած են արդիւնաւէտ քննարկումներ իրականացնելու միջավայրի պահպանման անհրաժեշտութիւնը:



Արցախի նախագահի մամուլի խօսնակ Դաւիթ Բաբայեան

բանակցութիւններուն: Ըստ Դաւիթ Բաբայեանի՝ համաձայնագրերու յայտարարութիւնը կը վերաբերի այն խնդրին, որ եռանախագահութեան ձեւաչափը փոփոխման ենթակայ չէ:

«Հետեւաբար, երբ որ խօսուած ենք ձեւաչափի փոփոխման անթույլատրելիութեան մասին, մենք լրիւ համաձայն ենք: Ա՛յ, օրինակ, որ Ատրպէյճանն ասուած է՝ Թուրքիան պիտի լինի համաձայնագրող երկիր, պէտք է Ֆրանսան դուրս գայ՝ դրա տեղը, չզիտեմ, այլ երկիր լինի, ա՛յ սա անընդունելի է», - ըսած է արցախցի պաշտօնեան:

«Իրենք չեն ասել՝ ինչ ձեւաչափի փոփոխութեան մասին է խօսքը», - յայտարարած է Բաբայեանը, «Ազատութեան» դիտարկման ալ՝ «Դուրս դա հասկանուած էք, որ եռանախագահողները պէտք է լինեն», արձագանգած էք - Միմիայն, միմիայն էրպէս ենք հասկանում, որովհետեւ այլ ձեւ չենք կարող հասկանալ, որովհետեւ դա ԵԱՀԿ-ի ընդունուած որոշում է՝ ո՞նց կարող են իրենք իրենց համար պարտադիր որոշումը չեղեալ յայտարարել, էրպէս չի լինում»:

ԵԱՀԿ կայքին մէջ հրատարակուած հաղորդագրութեան մէջ նշուած է.- «Միջնորդները դրական կը գնահատեն վերջին շրջանին շփման գիծին վրայ մասուան ղեկավարութեան հետ յարաբերութիւնը, նաեւ որոշ սկզբնական քայլերը, որոնք կ'իրականացուին բնակչութիւնը խաղաղութեան նախապատրաստելուն»:

Միեւնոյն ժամանակ Միմիայնի խումբը կը վերահաստատէ լարուածութեան թուլացման ու հրահրող հետորդաբանութեան նուազեցման խիստ անհրաժեշտութիւնը:

Այս ծիրին մէջ համաձայնագրերը կողմերուն կողմ ուղղած են գերծ մնալու յայտարարութիւններէ ու գործողութիւններէ, որոնք կ'ենթադրեն տեղուց վրայ իրադրութեան հակա փոփոխութիւն, նախապէս կը վճռեն ապագայ բանակցութիւններու ելքը կամ նախապայմաններ կը ստեղծեն, առանց միւս կողմին հետ համաձայնեցման, միակողմանի փոփոխութիւններ կը պահանջեն գործող ձեւաչափի համար կամ ցոյց կու տան թշնամական աշխուժ գործողութիւնները վերսկսելու պատրաստակամութիւնը:

Արցախի մէջ ԵԱՀԿ Միմիայնի խումբի յայտարարութիւնը իւրովի կը մեկնաբանեն: Մասնաւորապէս, ըստ Ղարաբաղի նախագահի մամուլի խօսնակին, համաձայնագրերը իրենց յայտարարութեան մէջ չեն խօսիր այն մասին, որ Ղարաբաղը չի կրնար մասնակցիլ

### Ալիեւը Դրական Գնահատած Է Մինսքի Խումբի Համաձայնագրերու Յայտարարութիւնը

Ատրպէյճանի նախագահը դրական գնահատած է ԵԱՀԿ Միմիայնի խումբի համաձայնագրերու դիրքորոշումը հակամարտութեան կարգաւորման ձեւաչափի վերաբերեալ: Այս մասին Իլհամ Ալիեւը յայտարարած է Ատրպէյճանի մէջ Միացեալ Նահանգներու նորանշանակ դեսպան Ըրի Լիքընսլըրի հետ հանդիպման ժամանակ:

«Երկրի ղեկավարը նշած է, որ ԵԱՀԿ Միմիայնի խումբի համաձայնագրերու վերջին յայտարարութիւնը, այդ շարքին՝ անոնց դիրքորոշումը բանակցային գործընթացի վերաբերեալ, Ատրպէյճանը դրական կը գնահատէ», - ըստուած է Ալիեւի աշխատակազմի մամուլի ծառայութեան հաղորդագրութեան մէջ:

դադրութեան մէջ:

Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու յառաջիկային սպասուող հանդիպման ընդառաջ տարածած յայտարարութեան մէջ եռանախագահները, մասնաւորապէս, կողմերը յորդորած են «գերծ մնալ յայտարարութիւններէ ու գործողութիւններէ, որոնք տեղուց վրայ իրադրութեան փոփոխութիւն կ'ենթադրեն, նախապէս կ'որոշեն ապագայ բանակցութիւններու արդիւնքը կամ կը ստեղծեն նախապայմաններ, առանց միւս կողմի համաձայնեցման՝ կը պահանջեն ձեւաչափի միակողմանի փոփոխութիւն, կամ ցոյց կու տան պատրաստակամութիւն՝ վերսկսելու ռազմական գործողութիւնները»:

### ՆԱԹՕ-ն Կը Շարունակէ Մնալ Հայաստանի Կարեւոր Գործընկերը. Պաշտպանութեան Նախարարութիւն

ՆԱԹՕ-ն կը շարունակէ մնալ Հայաստանի կարեւոր գործընկերը: 10 Մարտին մամուլի ասուլիսի ժամանակ, որ նուիրուած է ՆԱԹՕ-ի շաբթուան մեկնարկին, ըսած է ՀՀ Պաշտպանութեան նախարարութեան Պաշտպանական քաղաքականութեան վարչութեան պետ Լեւոն Այվազեանը:

Անոր խօսքով՝ համագործակցութիւնը բաւականին արդիւնաւէտօրէն կը շարունակէ զարգանալ շատ ոլորտներու մէջ: «Մեզ մօտ կան մի քանի ուղղութիւններ, որոնցով ՆԱԹՕ-ն մեզ փորձագիտական խորհուրդներ է տալիս», - պարզաբանած է Այվազեանը:

### Ամբողջութեամբ Կը Վերահսկենք Ատրպէյճանի Զօրավարութիւններուն. Դաւիթ Տօնոյեան

ՀՀ պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը շատ հանգիստ կը վերաբերի այս օրերուն Ատրպէյճանի մէջ իրականացուող զօրավարութիւններուն: Այս մասին 12 Մարտին, Aysor.am-ի հետ զրոյցի ժամանակ նշած է ՀՀ անվտանգութեան խորհուրդի անդամ, Պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը:

Ան շեշտած է՝ չի կարծեր, որ այս առումով անհանգստանալու կարիք կայ:

Դիտարկման, թէ Պաշտպանութեան նախարարութեան խօսնակը յայտարարած էր, որ այս զօրավարութիւնները կ'իրականացուին Փաշինեան-Ալիեւ սպասուող հանդիպման ծիրէն ներս, Դաւիթ Տօնոյեանը արձագանգած է՝ տարբերակ է:

Ինչ կը վերաբերի հարցին՝ ինչո՞ւ ատրպէյճանական կողմը առանց ծանուցումներու նման ծաւալի զօրավարութիւն կ'իրականացնէ, Դաւիթ Տօնոյեանը պատասխանած է.

«Զօրավարութեան անցկացումն ինքնստիւնքեան միջազգային պարտաւորութիւնների խախտում է, բայց այս պահին մենք ամբողջութեամբ վերահսկուած ենք ընթացքը: Անհանգստանալու ոչ մի ինդիք չկայ»:

Մարտ 11-ին Ատրպէյճանական բանակը լայնածաւալ զօրա-



Հայաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեան

վարութիւններ սկսած է: Անոնք պիտի շարունակուին հինգ օր՝ մինչեւ 10 հազար զինուորներու, 500 հրասայլի, 300 միակոր հրթիռահրետանային համակարգերու, օդուժի եւ այլ ծանր զինատեսակներու ներգրաւմամբ:

Ըստ պաշտօնական հաղորդագրութեան, զինուորները յարձակողական ծրագիր պիտի իրագործեն, փորձելով պայմանական հակառակորդը խոցել շարք մը ուղղութիւններով: Կը հաղորդուի, որ զօրավարութիւններու ընթացքին պիտի կիրառուին նաեւ վերջին տարիներուն ձեռքբերուած նոր զինատեսակները:

### ՆԱԹՕ-ն Կը Յարգէ Հայաստանի Ընտրութիւնը՝ Դաշնակիցներու Հարցի Առումով

«Հայաստանի եւ ՆԱԹՕ-ի միջեւ գործընկերութիւնը վերջին տարիներու ընթացքին զարգացած է», - «ՆԱԹՕ-ի շաբթի»-ի շրջանակէն ներս Ֆրանսական համալսարանին մէջ ըսած է ՆԱԹՕ-ի Գլխաւոր քարտուղարի Կովկասի եւ Կեդրոնական Ասիոյ հարցերով յատուկ ներկայացուցիչ ձէյմս Ապաթուրայը:

Ապաթուրայի խօսքով՝ Հայաստանի հետ համագործակցութիւնը քաղաքական է եւ գործնական. «Քաղաքական երկխօսութիւնը աշխուժ է, պէտք է շարունակուի, ընդ լայնուի, խորանայ: Ես նշեցի նաեւ գործնական գործընկերութեան մասին: Իւրաքանչիւր տարի մօտ 50 ուսուցման գործողութիւններու կը մասնակցին հայ մասնակիցները: Մենք կը պայքարինք նաեւ կաշառակերութեան դէմ: Հայաստանը կայ նաեւ ընդելուզման աջակցման ծրագրին մէջ: Մենք կ'աշխատինք կրթութեան բնագաւառը բարեփոխելու համար: Երրորդը՝ կիրն ու անվտանգութիւն ուղղութիւնն է, կ'աշխատինք այնպէս ընել, որ կիրները եւ տղամարդիկ որոշումներ կայացնելու հաւասար իրաւունք ունենան: Այսօր ՆԱԹՕ-ն կ'աշխատի նաեւ անբեկչութեան դէմ»:

ՆԱԹՕ-ի ներկայացուցիչը նաեւ նշած է, որ ՆԱԹՕ-ն կը յարգէ Հայաստանի Հանրապետութեան ընտրութիւնը՝ դաշնակիցներու հարցի վերաբերեալ: ձէյմս Ապաթուրայի խօսքով՝ խնդիր չկայ Եւրասիական տնտեսական միութեան



ՆԱԹՕ-ի Գլխաւոր քարտուղարի յատուկ ներկայացուցիչ ձէյմս Ապաթուրայ

թեան (ԵԱՏՄ) անդամ ըլլալու եւ ՆԱԹՕ-ի հետ Հայաստանի համագործակցութեան համար:

«Մենք զարգացած ենք երկրորդ աշխարհամարտի աւարտէն ետք: Մենք դժուար ժամանակներ կ'անցնենք: Մեր թեմաներէն մէկը՝ Ռուսաստանի հետ գործողութիւններու կառավարումն է: ՆԱԹՕ-ի համար Ռուսաստանի հետ երկխօսութիւնը շատ կարեւոր է»:

ՆԱԹՕ-ի Գլխաւոր քարտուղարի Կովկասի եւ Կեդրոնական Ասիոյ հարցերով յատուկ ներկայացուցիչը տեղեկացուցած է, որ ՆԱԹՕ-ն այս պահին կը բարեփոխուի, որպէսզի աւելի լաւ պայքարի այսօրուան սպառնալիքներուն դէմ:

Ան նաեւ շեշտած է, որ Հայաստանը ՆԱԹՕ-ի հետ համագործակցութիւնը պիտի շարունակէ նաեւ խաղաղապահ առաքելութիւններու շրջանակէն ներս, աւելցնելով, որ վերջինը պիտի շարունակէ նպաստէ Դաշինքի երկիրներու զինուած ուժերուն հետ համագործակցութեան հնարաւորութիւններու մեծացման:

# Չորս Հայեր Ֆորպսի 2019 Թուականի Միլիառատերերու Ցուցակին Կրայ



Ֆորպս Հանդէսը հրատարակած է 2019 թուականի միլիառատերերու ցուցակը: Անցած տարուան ընթացքին միլիառատերերու ցանկը համալրուած է 195 անունով, որոնք միասին 362 միլիառ տոլար կը տնօրինեն: Անոնցմէ 139-ը իրենք ստեղծած են իրենց կարողութիւնը, իսկ 56-ը ժառանգած են: Նորեկ միլիառատերերու շարքին առաջատարը Չինաստանն է՝ 53:

Երկիր մոլորակի ամենահարուստ մարդը ձեֆ Պեգոսն է: Ամազոն ընկերութեան ղեկավարի կարողութիւնը գնահատուած է 131 միլիառ տոլար: Մայքրոսոֆթի հիմնադիր Պիլ Կէյթսը երկրորդ հորիզոնականին է 96,5 միլիառ տոլարով: Երրորդ տեղը զբաղեցուցած է

ներդրող Ուորըն Պաֆէթը 82,5 միլիառ տոլարով:

Յանկի ամենաերիտասարդ ներկայացուցիչը Քայլի ձենէրն է՝ Քիմ Քարտաշեանի քոչըր: 21 տարեկանին անոր կարողութիւնը գերազանցած է 1 միլիառ տոլարի շեմը:

Ֆորպսի 2019 թուականի ցանկին մէջ ընդգրկուած 2153 հարուստներու շարքին 4 հայ միլիառատեր կայ: Անոնցմէ ամենամեծ կարողութիւնը ունի Սամուէլ Կարապետեանը: 3,7 միլիառ տոլարով ան 568-րդն է:

Սերկէյ Կալիցքին (Յարութիւնեան) 3,5 միլիառ տոլար ունի: Էտուարտո Էռնանդեսը ունի 1,6 միլիառ տոլար, ոսկերիչ Քերոլին Ռաֆայէլեանը՝ 1 միլիառ:

# «Ryanair» Ընկերութիւնը կը Պատրաստուի Մուտք Գործել Հայաստանեան Օդագնացութեան Շուկայ

Եւրոպայի խոշորագոյն օդագնացութեան ընկերութիւններէն մէկը՝ «Ryanair»-ը, կը պատրաստուի մուտք գործել հայկական շուկայ: Քաղաքացիական օդագնացութեան կոմիտէի նորանշանակ նախագահ Տաթևիկ Ռեւազեանը համոզուած է, որ այս քայլի շնորհիւ ղեկավարուած թռիչքներու տոմսերու գիները կը նուազին:



«Ryanair-ը յարմար գիներով տոմսեր վաճառող ընկերութիւն է: Դա նշանակուած է, որ ինքն ամէն ձեռքով պայքարում է, որ ծախսերը նուազեցնի, որ կարողանայ տրամադրի էջման տոմսեր: Ինքը կարող ա իրականում յեղափոխութիւն անի մեր օդագնացութեան մէջ, կարող ա մտնի ու ամբողջ շուկան փոխի: Որ Ryanair-ը մուտք գործի հայկական շուկայ, ես համոզուած եմ, որ տոմսերի գները կը նուազեն, ու դրա հաշուոյն հոսքը կը շատանայ»:

Եւրոպայից ղեկավար Հայաստան, բայց Հայաստանից էլ ղեկավար Եւրոպայ»:

«Ryanair»-ի մուտքը հայկական օդագնացութեան շուկայ Տաթևիկ Ռեւազեանը կը համարէ հայաստանեան քաղաքացիական օդագնացութեան ամենամեծ ձեռքբերումներէն մէկը. - «Բոլորը ինձ ասում էին՝ անհնար բան ա, երբեք չեն հետաքրքրուի հայկական շուկայով... Բայց գնացի, հանդիպեցի, ճիշդ մօտեցում ունեցայ, ու առաջարկ ուղարկեցին»:

# Պոլսոյ Պատրիարք՝ Մեսրոպ Մուֆաֆեան

Շարունակուած էջ 1-էն  
ներու մշտական հսկողութեան տակ էր Պոլսոյ Մուրք Փրկիչ հայկական հիւանդանոցին մէջ:

Մեսրոպ Մուֆաֆեանը ծնած է 1956 թուականի 16 Յունիսին Պոլսի մէջ: Ուսումը ստացած է Եսայեան հայկական նախակրթարանէն ներս, ապա ուսումը շարունակած է անգլիական վարժարանի մէջ: Հոգեւոր կրթութիւն ստացած է Երուսաղէմի մէջ, 1979-ին ձեռնադրուած է քահանայ: 1986-ին եպիսկոպոս օծուած է Ամենայն Հայոց Վազգէն առաջին կաթողիկոսի կողմէ: 1998-ին Գարեգին Խաչատուրեան Պատրիարքի

վախճանէն ետք զբաղեցուցած է տեղապահի պաշտօնը, նոյն տարուան 14 Հոկտեմբերին ընտրուած է Պոլսոյ պատրիարքական աթոռի 84-րդ գահակալ:

2008 թուականին ի վեր Պատրիարք Մեսրոպ Մուֆաֆեանի ծանր հիւանդութեան հետեւանքով առաջացած անգործունեայ վիճակը համայնքի օրակարգ բերած էր նոր Պատրիարքի ընտրութեան հարցը: Սակայն, աւելի քան 10 տարի այդ խնդիրը չէր հանգուցալուծուած: 2010-էն Պատրիարքութիւնը կը ղեկավարէ Պատրիարքի ընդհանուր փոխանորդ Արամ արքեպիսկոպոս Աթէշեանը:

# Ստեփանակերտի Սէջ Կայացաւ Հայաստանի Եւ Արցախի

Շարունակուած էջ 1-էն

հակամարտութեան հիմնական կողմի ներգրաւուածութեանն ուղղուած քայլեր անելու համար: Սրանք կէտեր են, որոնք առանցքային նշանակութիւն են ունեցել «Իմ քայլը» դաշինքի նախընտրական ծրագրում:

Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը եւ ես՝ որպէս ժողովրդի վստահութեան քուէն ստացած վարչապետ, ըստ այդմ հետեւողական քայլեր ենք ձեռնարկելու այս ուղղութեամբ, եւ այս հարցը եղել է շարունակելու է մնայ Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի եւ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահների հետ մեր քննարկումների կարեւորագոյն կէտերից մէկը: Հարկ եմ համարում ընդգծել, որ Արցախի ներգրաւուածութիւնը բանակցային գործընթացում մեզ համար քմահաճոյք չէ, ոչ էլ առաւել եւս նախապայման, այլ պարզ արձանագրումն այն բանի, որ Լեռնային Ղարաբաղի կարգաւորման հարցում առանցքային նշանակութիւն ունի Արցախի ներգրաւուածութիւնը:

Այս դիրքորոշումն արտայայտուած է մեր յարգանքը ոչ միայն Արցախի ժողովրդի եւ նրա իրաւունքների, այլեւ բանակցային գործընթացի մասնակից մեր բոլոր գործընկերների նկատմամբ, որովհետեւ մենք իրապէս շահագրգիռ ենք եւ ուզում ենք հասնել հարցի բացառապէս խաղաղ կարգաւորմանը եւ հաւատում ենք բանակցային գործընթացին, որի արդիւնաւէտութիւնը մեզ համար կարեւորագոյն առաջնահերթութիւն է, իսկ բանակցային գործընթացի արդիւնաւէտութեան առումով այս հարցը, ինչպէս նշեցի, առանցքային նշանակութիւն ունի»:

«Բանակցութիւնների մինչեւ այժմ յայտնի չըլնանալը, ըստ էութեան, ներառում են շահագրգիռ բոլոր կողմերին, բացի մէկից: Այդ բանակցութիւններում ներկայացուած է Ատրպէյճանը՝ ի դէմս նախագահ Ալիեւի: Վերջինս, ի դէպ, ներկայացնում է նաեւ, ինչպէս ինքն է ասում, Լեռնային Ղարաբաղի ատրպէյճանական համայնքը, որովհետեւ այդ համայնքի ներկայացուցիչները, հանդիսանալով Ատրպէյճանի քաղաքացի, մասնակցել են Ատրպէյճանի նախագահական ընտրութիւններին եւ, հետեւաբար, Ատրպէյճանի նախագահին տուել են նաեւ իրենց ներկայացնելու լիազօրութիւն, հետեւաբար բանակցային սեղանի շուրջ Ատրպէյճանի նախագահի ներկայութիւնն ապահովում է նաեւ ժամանակին Ղարաբաղում ապրած ատրպէյճանցիների ներկայութիւնը:

Այդ բանակցութիւններում ներկայացուած է նաեւ Հայաստանի Հանրապետութիւնը՝ ի դէմս երկրի վարչապետի, որը տուեալ ղեկավարում հանդէս է գալիս որպէս Հայաստանի Հանրապետութեան ժողովրդի կողմից ընտրուած ներկայացուցիչ: Հետեւաբար, Հայաստանի ժողովուրդը նոյնպէս ներկայացուած է բանակցային գործընթացում:

Ի դէմս ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահութեան՝ բանակցային գործընթացում ներկայացուած է նաեւ միջազգային հանրութիւնը», - նշած է Նիկոլ Փաշինեան:

նր եւ շեշտած. - «Այս ամէնը, իհարկէ, լաւ է ու չափազանց կարեւոր, եւ մենք բարձր ենք գնահատում այն ջանքերը, որ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահող երկրները ներդրել են եւ ներդնում են կարգաւորման գործընթացում: Բայց գլխաւոր հարցը հետեւեալն է՝ իսկ բանակցային գործընթացում ո՞վ է ներկայացնում Արցախի ժողովրդին կամ, ինչպէս որոշ ղեկավարում ասուած է, Ղարաբաղի հայութեանը: Խնդիրն այն է, որ բանակցային գործընթացում այսօր Արցախի ժողովին ներկայացնելու լիազօրութիւն, օրինակաւորութիւն ունեցող որեւէ ներկայացուցիչ չկայ, որովհետեւ բանակցային սեղանի շուրջ ներկայ չէ Արցախի ժողովրդի կամ, ինչպէս մեր որոշ գործընկերներ գերադասում են ասել, Ղարաբաղի հայութեան քուէն, լիազօրութիւնն ստացած որեւէ մարմին»:

Բազմիցս ասել եմ, որ Հայաստանի վարչապետը չի կարող նման լիազօրութիւն կատարել՝ այն պարզ պատճառով, որ Արցախի ժողովուրդը Հայաստանի ընտրութիւններին չի մասնակցում, չի քուէարկում եւ, ուրեմն Հայաստանի վարչապետը չի մտնում Արցախի ժողովրդին ներկայացնելու լիազօրութիւն ունեցող անձանց շրջանակի մէջ: Եւ սա ոչ թէ քմահաճոյքի, նախապայմանի, այլ սովորական օրինականութեան հարց է, իսկ օրինականութիւնը ժամանակակից յարաբերութիւնների առանցքային գործօն է՝ ոչ միայն ներքաղաքական, այլեւ միջպետական եւ միջազգային յարաբերութիւններում»:

Բակո Սահակեանը, իր հերթին, մասնաւորապէս յայտարարած է. - «Մենք առաջին անգամ ենք այսօր անդրադառնալու մեր երկու հանրապետութիւնների, ասել է թէ՛ մեր հայրենիքի համար կարեւորագոյն եւ առաջնահերթ խնդիրների քննարկմանը: Այս ընթացքում մենք միջանկեալ բազմաթիւ եւ բազմազան հանդիպումներ ենք ունեցել տարբեր մակարդակներով: Մեր ոլորտների, մեր գերատեսչութիւնների, մեր նախարարութիւնների պատասխանատուները մի շարք հանդիպումներ են ունեցել, եւ այդ հանդիպումների ընթացքում ծնուել է այդ գաղափարը՝ հրաւիրելու Անվտանգութեան խորհուրդների համատեղ նիստ: Մենք նաեւ այս ընթացքում կարեւորել ենք, որ անհրաժեշտութիւն ունենք համազգային օրակարգ ունենալու, եւ ես աւելի քան համոզուած եմ, որ այսօրուայ մեր համատեղ նիստը նպաստելու է այդ ազգային օրակարգի ձեւաւորմանը: Ինչպէս այս տարիների ընթացքում եղել է, անփոփոխ են մնացել նաեւ այդ ազգային օրակարգում դասակարգուած մեր առաջադրանքները: Եւ կարծում եմ՝ բոլորը համամիտ կը լինէք, որ եղել է, կայ եւ վաղն էլ կը մնայ մեր հայրենիքի համար իբրեւ առաջնահերթ խնդիր Արցախի Հանրապետութեան անկախութեան միջազգային ճանաչումը, եւ այսօրուայ համատեղ նիստի ընթացքում մենք հնարաւորութիւն կ'ունենանք նաեւ անդրադառնալու, թէ ներկայիս շրջանում տեղի ունեցող այդ ուղղութեամբ քննարկումներն ինչպէս են ընթանում»:

# Միջնորդների Ուղերձը եւ Նախկինների Աղմուկը



ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների վերջին յայտարարութիւնը, մեղմ ասած, մեծ աղմուկի պատճառ է դարձել հայկական հանրութեան շրջանում: Եւ յատկապէս ոգեւորուել են նախկին իշխանութիւնների ներկայացուցիչներն ու նրանց յարակից վերլուծաբանները: Եւ դա այն դէպքում, երբ այդ յայտարարութիւնից ամենաքիչը հենց նրանք պիտի ոգեւորուեն: Եւ ահա թէ ինչու:

Ինչ են ասում համանախագահները. եթէ կարճ, ապա համանախագահները/միջնորդները փաստացի «դիմադրում են» Հայաստանի նոր իշխանութիւնների յայտարարած՝ բանակցային ֆորմատն ամբողջացնելու նախաձեռնութեանը, ցանկանում են պահպանել բանակցային՝ մինչեւ վերջերս գործած ձեւաչափը, եւ այն պայմանաւորուածութիւնները, որոնք ձեռք են բերուել եւ շարունակաբար փոխանցուել են Քոչարեանից Սարգսեանին: Այսինքն՝ բանակցային երկկողմ ֆորմատի ժառանգականութիւնը՝ միայն Հայաստանի համաձայնութեամբ տարածքների վերադարձ, յետագայում երբեւէ կայանալիք կամ արտայայտութեան իրացման խոստումով: Այսինքն, ժողովրդական լեզուով ասած, «ուրեմն, մենք 20 տարի փոխուած ֆորմատով ջանք գործադրենք, դուք գաք, թէ բա՛հ հա՛յ հայկական շահ, հա՛յ Ղարաբաղը բանակցութիւնների մասնակից, այդպէս ո՛նց կը լինի»:

Մինչեւ հայաստանեան յեղափոխութիւնը ԼՂ հարցի շուրջ բանակցութիւններն ընթացում էին սեղանին դրուած վերջին փաստաթղթի՝ մադրիդեան սկզբունքների եւ դրանց նորացուած տարբերակի շուրջ: Մադրիդեան սկզբունքները բանակցային երկու կողմերը (Հայաստանն ու Ատրպէյճանը) որպէս բանակցութիւնների հիմք ընդունել են 2007-ի Նոյեմբերին՝ Ռոբերտ Քոչարեանի օրօք:

Հայաստանում ամիսներ անց պէտք է տեղի ունենային նախագահական ընտրութիւններ: Այդ ժամանակ թէ՛ Քոչարեանը, թէ՛ վարչապետ Սերժ Սարգսեանը նշում էին, որ նախագահի իշխանական թեկնածու Սարգսեանը լիովին տիրապետում է բանակցային գործընթացին եւ երաշխաւորում դրանց շարունակականութիւնը:

Եւ այդպէս էլ եղաւ, Սարգսեանը միայն որպէս անձ փոխարինեց Քոչարեանին, բայց բանակցութիւնների հուղեղան փոփոխութիւն

տեղի հունցեցաւ: 2008 թուականին անգամ Սարգսեանի նախընտրական ծրագրում յստակ գրուած էր ԼՂ հիմնախնդրի լուծման՝ տարածքների վերաբերեալ իր պատկերացումը. «...պէտք է ապահովուել ԼՂՀ բնակչութեան եւ սահմանների անվտանգութիւնը, ՀՀ-ն եւ ԼՂՀ-ն պետք է ունենան ընդհանուր սահման»:

Սերժ Սարգսեանի նախագահութեան շրջանում գաղտնագերծութեան Մադրիդեան սկզբունքները, որտեղ ամրագրուած էր.

«ԼՂ-ին յարակից ատրպէյճանական բոլոր տարածքները, որոնք գտնուում են հայկական վերահսկողութեան տակ, վերադարձուելու են ատրպէյճանական վերահսկողութեան տակ ներքոշարադրեալ կարգով, որոնց մանրամասները կողմերը համաձայնեցնելու են խաղաղութեան համաձայնագրով:

- Հայկական ուժերը դուրս են բերուում Քելբաջարի շրջանից: Սահմանափակ զորամիաւորում տեղակայուելու է Քելբաջարի շրջանի այն տարածքում, որը որոշելու է Միջազգային անցումային յանձնաժողովը՝ մինչեւ խաղաղութեան համաձայնագրի ստորագրումը:

- Քելբաջարի շրջանը գտնուելու է Միջազգային անցումային յանձնաժողովի մոնիտորինգի տակ՝ ԵԱՀԿ յանձնաժողովի միջոցով, որը ներառելու է հայ եւ ատրպէյճանցի ներկայացուցիչները: Քելբաջարի շրջանի միջազգային անցումային մոնիտորինգի ընթացքում Քելբաջարի շրջանի բնակչութեան դուրս գալը շրջանից միջազգային հանրութեան կողմից խրախուսուելու է:

- Ատրպէյճանական ներքին տեղահանուած անձանց թոյլ կը տրուի վերադառնալ Քելբաջարի շրջան խաղաղութեան համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հինգ տարի անց:

4) Համաձայնեցուած լայնքի միջանցքը պէտք է ԼՂ-ն կապի Հայաստանի հետ: Մինչեւ ԼՂ վերջնական իրաւական կարգավիճակի որոշումը, այդ միջանցքը գտնուելու է ԼՂ ժամանակավոր իշխանութիւնների վերահսկողութեան տակ համաձայն ստատուս քոչուի պայմաններին այն պահի դրութեամբ, երբ խաղաղութեան համաձայնագիրը կը մտնի ուժի մէջ: ԼՂ վերջնական իրաւական կարգավիճակի որոշումից յետոյ, միջանցքի օգտագործման գործընթացը կը կարգաւորուի՝ հաշուի առնելով ԼՂ վերջնական կարգավիճակը»:

2016 թուականին՝ Դմիտրի

Կիսելիովին տուած հարցազրույցում Սերժ Սարգսեանը յայտարարում է, որ 2011 թուականին կազանում Հայաստանը պատրաստ էր ստորագրել բանակցող փաստաթուղթը (նորացուած Մադրիդեան՝ կազանեան թուղթ), որով «հայկական կողմերը՝ Լեւոնային Ղարաբաղը եւ Հայաստանը, թողնում են այն տարածքները, որոնք այսօր զբաղեցուած են որպէս անվտանգութեան գօտի: Այսինքն, այն տարածքները, որոնք ատրպէյճանցիները համարում են գրաւեալ՝ 7 ատրպէյճանական շրջաններ: Մենք թողնում ենք այդ տարածքները եւ հեռանում: Այսինքն, դա տարածքային ամբողջականութեան սկզբունքն է»:

Յիշեցնենք, որ 2011-ին հայաստանեան կողմը յայտարարել էր, որ կազանում «առաջընթաց» չի արձանագրուել, քանի որ վերջին պահին Ատրպէյճանի կողմից նոր պայմաններ են առաջ քաշուել: Բանակցութիւնների վերաբերեալ յետագայում տեղի ունեցած արտահոսքերից պարզուում էր, որ կազանից յետոյ բանակցութիւնները շարունակուել են նորացուած առաջարկներով՝ այսպէս կոչուած՝ Լաւրովեան պլանով, ըստ որի՝ տարածքների վերադարձը, այսպէս ասած, փուլային եղանակով պէտք է կատարուի՝ մի քանի շրջան, յետոյ մի քանի շրջան:

Բանակցութիւնների հենց այս փուլում էլ տեղի է ունենում հայաստանեան յեղափոխութիւնը:

Հայաստանի նոր իշխանութիւններն իրենց ընթացող բանակցութիւնների իրաւաւորող չեն յայտարարում, պարզ չէ անգամ՝ պատրաստ են նրանք դրանք շարունակել բովանդակային առումով, թէ՛ ոչ, որովհետեւ նոր իշխանութիւնների եւ մասնաւորապէս Նիկոլ Փաշինեանի կողմից նախեւառած դրուած է մէկ հարց՝ սկզբում վերականգնել բանակցութիւնների ԵԱՀԿ կողմից հաստատուած եռակողմ ֆորմատը:

Ու այստեղ ահա տեղի է ունենում ուշադրաւ: ԼՂՀ իշխանութիւնները յայտարարում են, թէ իրենք դէմ են Մադրիդեան սկզբունքներին. «Մենք ինչպէ՞ս կարող էինք ընդունել մի փաստաթուղթ, որի ո՛չ մշակմանը, ո՛չ քննարկումներին առհասարակ չենք մասնակցել»: Այսինքն, փաստացի զրոյացնում են Քոչարեանի եւ Սարգսեանի ամբողջ բանակցածը: Զարմանալին այն է միայն, որ արդարացի այս տեսակէտը ուղիղ տեսքով յայտարարուած է միայն այսօր եւ ոչ՝ Քոչարեանի ու Սարգսեանի օրօք:

PASADENA – Even though we are about to enter the solemn period of Lent, the Johannes Brahms German Requiem, performed by the Lark Musical Society on Saturday, March 2, 2019, ushered us into the glory of Easter with its “Promise of Hope”—They will enter Zion with singing...Gladness and joy will overtake them. (Isaiah 51:11). God’s word came alive through the powerful, transcendent voices of the Lark Chorus, with the LARK Orchestra under the masterful direction of Maestro Vatsche Barsoumian. Considered his greatest vocal work, Johannes Brahms (1833-1897) intended his famous German Requiem to be for the living instead of the departed—a non-denominational statement of faith.

Following the concert, the audience, at the annual collaboration of the Lark Musical Society and the Armenian Missionary Association of America (AMAA), at the stately Ambassador Auditorium in Pasadena, California, was bussing with small gatherings animatedly discussing the majestic performance of the Brahms Requiem with exclamations of: “The soaring music transported our souls to the heavens.”

Soloists: Baritone, Edward Levy, Soprano, Suzanne Waters performed inspiring renditions of Brahms’ message—Your heart shall rejoice, and no one will take away your joy. (John 16:22).

The prelude to the Requiem was two other works by Brahms; Schicksalslied, Op. 54 (Song of Destiny) completed in 1871—is an orchestral accompanied choral setting of a poem written by Friedrich Holderlin. Alto Rapsody, Op 53 written in 1869 as a wedding gift to Robert Schuman’s daughter, is a composition in a setting of verses from Johann Wolfgang von Goethe, performed with a soul-stirring rendition by Mezzo-

Soprano, Garine Avakian.

In a pre-concert scholarly lecture, Doris Melkonian shared how Brahms was greatly influenced by Martin Luther’s German Bible. He established his reputation on Ephesians 2:8: For by grace you have been saved through faith; and not of yourselves, it is a gift from God. Doris shared how the theme was drawn from the fourth movement of the Requiem, “And now, O Lord, what do I wait for? My hope is in you.” (Psalm 39:7) The Promise of Hope is a greater hope, a hope in God, and the hope of eternal life through Christ Jesus.

The presentation of Brahms Requiem by the Lark singers and musicians, under the direction of Maestro Vatsche Barsoumian, was the most moving experience that I have ever had. The music permeated my body and soul. As I sat there listening, I felt as if I were going to heaven on the wings of an angel. With the recent passing of Dr. Mihran Agbabian, a longtime supporter and member of the AMAA, the evening was dedicated to his memory. Ken Kevorkian, Chairman of Concert Organizing Committee.

Lark Musical Society President, Andy Torosyan shares: I am proud of the AMAA and LARK for bringing the community together with a magnificent concert featuring Brahms’ German Requiem. The performance was powerful and made us feel the music came to life and we were a component part of the experience that Brahms intended. Not only was it awe inspiring, but it ended in a peaceful prayer and reminded us of our mission to serve God by serving our fellow mankind. I am grateful to everyone who attended and supported the concert. As you know, nonprofits cannot continue their mission of service to the community if the community does not in fact support the nonprofit. I look forward to next year’s concert and invite everyone to come and celebrate the Lenten season with us.

## Nikol Pashinyan, Bako Sahakian Co-Chair

Continued from page 1

accepts these three principles and six elements as a basis for the negotiation process.

“This is really an important question, but in answering this question we need important clarifications. What can these principles mean in practice and

who has the right to interpret them? This is important, because the way Azerbaijan interprets these principles is unacceptable for us. We, of course, can come up with our own interpretation of these principles, but it’s pointless because our goal is not to engage in a war of words, but to have an efficient negotiation process. And consequently, the

## A Decade-Long Goodbye for a Journey Cut Short

Continued from page 3

nity—among them Bishop Mesrob, when he was the outspoken young Chancellor of the Patriarchate. He was falsely accused of supporting, predictably, “terrorist acts against Turks” in sensationalist newspaper headlines. Among a host of preposterous court cases brought against him in the same period, one is notable. In 1987 Mutafyan appeared in a Turkish Criminal Court in Istanbul to face charges for violating the country’s statutes on the preservation of historical buildings. A state prosecutor had charged him of being guilty of covering the leaking roof of a balcony of the Armenian Patriarchate with rubber-based tiles (“eternite”). The prosecutor asked the court to sentence Mutafyan to two to five year prison term for the offense. A confidential report, revealed during Hrant Dink’s trial, showed that Mutafyan was under surveillance by the police and intelligence services “for his Armenian nationalist inclinations”—as labelled by the state agencies.

Upon his election as Patriarch, Mutafyan was able to develop a *modus vivendi* with the state, even as he demanded respect for the rights of the church and community with tact and discretion. During a visit to Ankara in 2001, he assured the Chairman of the Grand National Assembly that “the interests of the Turkish Armenians are in line with the interests of the State and the place where the problems of the Community are ought to be discussed is the [Parliament].”

Among the critical challenges Patriarch Mesrob faced at his election was the lack of adequately trained and sufficient number of priests to staff Istanbul’s 33 Armenian churches. Over the years he successfully recruited a cadre of young candidates, trained and ordained them to the priesthood. Many of them continue to serve the Patriarchate until today.

Minas Mutafyan, his baptismal name, was born in Istanbul in 1956. Upon completing his elementary education at the local Essayan Armenian School, he attended a British secondary school in Istanbul and later the American High School in Stuttgart, Germany. He graduated with Bachelors in sociology and philosophy from the University of Memphis, Tennessee. He was ordained a priest in May 1979 by his spiritual mentor Patriarch Shnork Kalustian. Mutafyan contin-

basis for the negotiation process should not leave room for different interpretations,” Pashinyan said.

“However, the principles and elements proposed by the co-chairs have given rise to all sorts of interpretations over the past 10 years and, therefore, the most important objective of the forthcoming negotiation process should be to clarify the so-called main concepts – the three principles and six elements, and we are ready also for such a conversation.” Another major issue pointed out by the Armenian prime minister at the Stepanakert meeting is preparing societies for peace.

For his part, in his opening remarks Nagorno-Karabakh president Sahakian,

ued his graduate studies in Old Testament and archaeology at the Hebrew University and the American Biblical Institute in Jerusalem. In September 1986 he was consecrated a bishop by Catholicos Vazken I in Etchmiadzin. While continuing his post graduate studies, he served the pastoral and spiritual needs of the community through various churches in Istanbul and the Princes’ Islands and held high level positions within the Patriarchate.

Being Patriarch of Turkey is not an envious position. The Armenian community, the religious and lay leadership in Turkey have to constantly juggle their ethnic and state loyalties. “Every Armenian in Turkey grows up with three elements in his personality: being a Turkish citizen, then his heritage as an Armenian, and then his faith as a Christian in a country which is overwhelmingly-99 percent-Moslem,” Mutafyan had explained in an interview.

The elections of church and charity trusts are major “political” issue for the Turkish Government. It is one of the controlling mechanisms of the state by which it manages the affairs of the minorities and ensures loyalty. Since 2013, the Government has not allowed minorities to hold new elections. Previously, even participation in elections outside Turkey were not allowed. For instance, in 1995, Ankara forbade lay delegates from Istanbul to participate in elections for a new Catholicos in Armenia. A year earlier, the Government had ordered the Patriarchate to disband its Council of lay advisors.

In the coming months it remains to be seen as to how the Turkish government will handle the election of Mutafyan’s successor. Predictably, the election process will face the customary state-imposed restrictions and administrative hurdles, which will be exacerbated by the personality clashes and ambitions of the high ranking clergymen at the Patriarchate. Turkish law mandates Mutafyan’s successor to be a Turkish citizen or at least born in Turkey, preferably one who has completed the mandatory Turkish military service, which limits the list of eligible candidates to only a few. None have the calibre and gravitas of Patriarch Mesrob Mutafyan. Enormous challenges are ahead of the Church and community in Turkey.

*For a wider context and discussion of the Armenian community in Turkey, see Hrach Tchilingirian’s “The Other Citizens.”*

in particular, stressed that international recognition remains a priority for Stepanakert.

As a result of discussions both security councils reaffirmed that Nagorno-Karabakh’s “defense capabilities are guaranteed and are at the high level.” “At the same time the two Armenian sides again expressed their support for and commitment to an exclusively peaceful settlement of the conflict under the aegis of the OSCE Minsk Group and on the basis of the fundamental principles of international law, in particular, the right of peoples to self-determination,” the Armenian prime minister’s press office said in the press release.

# Անտեղի եւ Անիմաստ Յայտարարութեան մը Առիթով

ԱՍՏՏՈՒՐ ԿԻՒՋԷԼԵԱՍ

Հ.Յ.Դաշնակցութեան ԱՄՆ Արեւելեան Շրջանի 121-րդ Շրջանային ժողովը «իր խիստ վրդովմունքը կ'արտայայտէ այն մասին, որ ՀՀ Ազգային ժողովի մեծամասնութեան որոշ ներկայացուցիչներ, խորհրդարանի փոխ-նախագահի գլխավորութեամբ, իրենց լիազօրութիւնները գերազանցելով (ընդծուծը Ա.Կ.), արտախորհրդարանական հարթակներու վրայ ՀՀ օրհներգը փոխելու հարցը դարձուցած են քննարկուածի առարկայ: Դատապարտելով ազգային-պետական արժէքներ կամ խորհրդանիշեր վարկաբեկելու, արժեզրկելու որեւէ փորձ, յստիօրէն կ'արձանագրենք, որ պետական խորհրդանիշերու փոփոխութեան այս քննարկումը մը որեւէ իրաւական հիմք չունի», (ընդգծումը Ա.Կ.) ըստած է հրատարակուած յայտարարութեան մէջ:

Վստահ եմ, ինչպէս ինձի՝ այնպէս ալ հայաստանցիներու մեծամասնութեան՝ յատկապէս նոր սերունդին համար բոլորովին անհասկնալի է «կուսակցապաշտներու»\*\* ստեղծած անտեղի եւ անիմաստ աղմուկը...:

Յոյս ունէի որ, ազատ անկախ Հայաստանի ծնունդով, հատուածամոլութիւնն ու «կուսակցապաշտութիւնը», որոնք տասնեակ տարիներ բաժան-բաժան ըրին պիտուք հաշտութիւնը, թունաւոր որդի մը պէս ծծելով անոր կենսունակութեան ծաւին աւելը, իրենց հիւանդագին գոյութեան հուսկբանքը գրած ըլլային արդէն: Կը պարզուի որ դարձեալ... սխալած եմ:

Վերադառնալով Հ.Յ.Դաշնակցութեան ԱՄՆ Արեւելեան Շրջանի 121-րդ Շրջանային ժողովի յայտարարութեան, ի դէպ է հարց տալ, թէ ինչու՞ Հայաստանէն հազարաւոր մղոններ հեռու գումարուած կուսակցական ժողով մը ՀՀ օրհներգը կը դարձնէ օրակարգի նիւթ: Տեղին է հարց տալ նաեւ, թէ ի՞նչ կը նշանակեն՝ «ազգային-պետական արժէքներ կամ խորհրդանիշեր վարկաբեկել» եւ «որեւէ իրաւական հիմք չունի» արտայայտութիւնները:

ՀՀ օրհներգը փոխելու առնչութեամբ տեղի ունեցող քննարկումներն ու կարծիքներու փոխանակութիւնը Հ.Յ.Դ. ի՞նչ արդարացի պատճառաբանութեամբ կը համարէ «իրաւական հիմք» չունեցող, կամ «ազգային-պետական արժէքներ կամ խորհրդանիշեր» վարկաբեկող արարք...:

Համազգային կարեւորութիւն ունեցող խնդրի մը մասին կարծիք յայտնելը բացարձակապէս կապ չունի «ազգային-պետական արժէքներ վարկաբեկելու» կամ «իրաւական հիմք» ունենալ-չունենալու հետ...: Ըստ երեւոյթին՝ Հ.Յ.Դ.ի Շրջանային ժողովը կը շփոթէ «կարծիք յայտնելը»՝ «որոշում առնելու» հետ:

Իմ իրաւունքս է, օրինակի համար, որպէս Հայաստանի քաղաքացի, պաշտպանել այն տեսակետը, ըստ որում՝ «Մեր հայրենիք»ը արպէս ՀՀ օրհներգ որդեգրելը, «ազգային-պետական արժէքներու կամ խորհրդանիշերու» վարկաբեկում է: Իմ տեսակէտս հիմնուած է այն իրողութեան վրայ, որ «Խտալացի աղջկան երգը», բացի օրհներգէ մը պահանջուած տարրական նախապայմաններէն զուրկ ըլ-

լալէ՝ ո՛չ մէկ առնչութիւն ունի հայ ժողովուրդին հետ, եւ անոր երաժշտութիւնն ու «թշուառ անտէր» հոգեբանական հոգեվիճակ արտայատող բանաստեղծութիւնը, չեն կրնար պայծառ ապագայ մը կերտելու վճռականութեամբ ոգեւորուած հայ ժողովուրդի երագներուն թարգմանը հանդիսանալ:

Նման կարծիք յայտնելու համար «իրաւական հիմք» կամ «լիազօրութիւն» պէտք է ունենամ: Իսկ ո՞վ պիտի տայ ինձի այդ լիազօրութիւնը...:

Հ.Յ.Դ. իր նիգակին թիրախ դարձնելով Ազգային ժողովի կարգ մը անդամները, կը յայտարարէ, որ անոնք «գերազանցած են» իրենց «լիազօրութիւնը»:

Կը պարզուի որ, ըստ դաշնակցութեան, բոլոր անոնք, որոնք ի նպաստ Ա. խաչատուրեանի յօրինած հիմնը վերականգնելու կարծիք յայտնած են, առաջարկելով որ Սարմէնի բանաստեղծութիւնը ենթարկուի կարգ մը փոփոխութիւններու, կամ ալ՝ բոլորովին նոր քերթուածով մը զգեստաւորուի մեծ կոմպոզիտորին հանձարեղ հիմնը՝ ո՛չ միայն «իրաւական հիմք» չունին, այլ գերազանցած են նաեւ՝ իրենց «լիազօրութիւնը»...:

Երբ կը խօսուի «իրաւական հիմք»ի եւ «լիազօրութեան» մասին, թելադրելի է որ կուսակցութիւնները, ամէն բանէ առաջ, գիտնան իրենց իրաւասութեան եւ լիազօրութեան սահմար: Գիտնան՝ որ ուրիշներու նման, իրենք եւս կարծիք յայտնելու իրաւունք ունին, բայց՝ միաժամանակ ընդունին, որ իրաւունք չունին անտեղի ու անիմաստ յայտարարութիւններ նետարձակելու իրենց հակակարծիք քաղաքացիներու հասցէին...:

Ըլլալով համահայկական բնոյթ ունեցող հարց մը, սպասելի էր որ ՀՀ օրհներգը դառնար համազգային հետաքրքրութեան եւ քննարկման առարկայ: Ինչպէս մատնանշեցինք, ժողովրդավարական սկզբունքով կառավարուող երկրի մը մէջ, ամէն քաղաքացի իրաւունք ունի իր սեպակական տեսակէտը ունելու, անկախ իր դիրքէն եւ վարած պաշտօնէն: Դժբախտաբար այս եւ նման պարագաներուն՝ բացառութիւն կը կազմեն ազգային-քաղաքական կուսակցութիւններու անդամները, որոնք հաւատարմութեան երդում տուած ըլլալով իրենց պատկանած կուսակցութիւններուն՝ ինքնակամ կորսնցուցած են սեպակական կարծիք ունենալու իրաւունքը:

Կայ ուրիշ կարեւոր հանգամանք մը եւս. կուսակցութիւնները պէտք է հասկնան, որ պետութեան օրհներգը ընտրելու որոշումը իրենց իրաւասութեան սահմանէն դուրս է: Օրհներգի հարցը ազգովին քննարկելի էտք, որոշում առնելու իրաւունքը կը վստահուի մասնագէտներէ բաղկացած յանձնաժողովի մը:

«Ժամանակն է որ Հայաստանն ունենայ իր արժանապաշտ պետական օրհներգը» խորագրով, վերջերս հրատարակած յօդուածիս մէջ, նշած եմ.

«Երկրի մը պետական օրհներգը իր մէջ պէտք է խտացնէ իր ժողովրդին պատմութիւնը, անոր մշակոյթը, անոր հոգևոր արժէքները, անոր երաժշտութեան դարաւոր ձայնալիքները, մասնաւոր՝ անոր բարգաւաճ ու պայծառ հայրենիք մը կերտելու վճռականութեան ու հայրենասիրական ոգիին

# Աստուածաշունչով Ապրուած Կեանք մը

Եթէ իմ երկար ասպարէզային կեանքին մէջ ներառուած են շատ ճամբորդութիւններ՝ եւ այս մեկնելով իմ աշխատանքային գործի պարտադրանքներէն՝ բայց այդ մէկը նաեւ լաւ առիթ եղած է ծանօթանալու հայկական գաղութներու եւ անոնց առաջնորդներուն: Եւ այս իմաստով՝ իմ յաճախակի Պոլիս այցելութիւնները նաեւ պիտի ընդգրկէր իմ ծանօթացումը եւ անոր հետ շարունակուած հաղորդակցութիւնը թուրքիոյ հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆեանի հետ:

Եթէ պատրիարքին մէջ տեսած եմ եկեղեցական կղերական-առաջնորդի ամէն տուեալները՝ բայց նաեւ շրջահայացութիւնը: Եւ այս շրջահայացութեան մէջ անոր վեհանձն ու ազնիւ հոգին՝ ընդունելու նաեւ «ուրիշ»ը որ կրնար տարբեր ըլլալ: Եւ ան հանդիսացաւ այն առաջնորդը որ կրցաւ կ'ամրջել իր յարաբերութիւնները այդ բոլոր «ուրիշներուն» եւ անոնց տարբերութիւններուն մէջէն:

Բայց կար նաեւ աւելին: Մեսրոպ պատրիարք Աստուածաշունչին եւ անոր բովանդակութեան լաւ գիտակ էր: Եւ ոչ միայն գիտակ...: Անոր կեանքը ապրող եւ շարժող էր Աստուածաշունչով: Եւ այս իր խօսքով բայց նաեւ գործով: Ու տակաւին՝ ան կրցաւ Աստուածաշունչը ներմուծել հաւաքական կեանքերուն մէջ որպէս ապրելու զօրաւոր գրաւական:

Եթէ անողոք հիւանդութիւնը

արտայայտութիւնը:

Արամ խաչատուրեանի յօրինած օրհներգը իր մէջ կը խտացնէ ահա՛ այդ բոլորը:»

Հայ կոմպոզիտորներու եւ երաժշտագէտներու բացարձակ մեծամասնութիւնը, ինչպէս անցեալին՝ նոյնպէս ալ այսօր, կողմնակից է որ Արամ խաչատուրեանի հրաշափռ երաժշտութիւնը վերահաստատուի որպէս ՀՀ օրհներգը:

Կ'ուզեմ յօդուածս աւարտել՝ հայկական անեղծ կաթով սնած, 20-րդ դարու մեծագոյն կոմպոզիտորներէն մեկուն, Արամ խաչատուրեանի հետ առնչուած յուշապատումով մը, որ ցոյց կու տայ Հայաստանի, հայ ժողովուրդի եւ մեր սրբութեանց հանդէպ անոր ունեցած անսահման սէրն ու ակնածաբը: Թելադրելի է որ այս յուշապատումը կարգան բոլոր անոնք, որոնք ամէն ճիգ կը թափեն հանրութիւնը համոզելու, որ Ա. խաչատուրեանի յօրինած հիմնէն՝ «սովետական հոտ» կու գայ...:

Ա. խաչատուրեան 1977 թ.ի Յունուար-Փետրուար ամիսներուն կը գտուէր Անգլիա: Յունուարի սկիզբը, Լոնտոնի Տորչեսթր պանդոկի մէջ տեղի ունեցաւ վարպետին առաջին հարցազրոյցը (press conference) անգլիական լրամիջոցներու հետ: Նախքան հարցազրոյցը, իր թարգմանին միջոցով, Ա.

առիթ չի տուաւ որ պատրիարքը կրնար իր եկեղեցական ու ազգային կեանքի առաջնորդութիւնը կատարել աւելի բեղուն՝ բայց կայ անոր ետին ձգած պատգամ-կտակը: Թէ Աստուածաշունչով ապրուած կեանքը կ'իմաստաւորուի: Եւ թէ այս կեանքերը կը մնան Արժէք՝ որուն պէտք է կառչիլ եւ անոր հետ ապրիլ: Եւ Մեսրոպ պատրիարք կառչեցաւ եւ ապրեցաւ Աստուածաշունչի Արժէքի կեանքին համար՝ եւ զայն կը ձգէ այսօր մեր բոլորին որպէս ապրելու կտակ:

Եթէ մէկ կողմէ մեր ցաւակցութիւնները թուրքիոյ հայ գաղութին մեր բոլոր կառույցներուն՝ եղբայր-քոյրերուն՝ իրենց եւ մեր բոլորին սիրելի պատրիարք Տոր վախճանումին համար՝ բայց նաեւ կը միանանք ձեր բոլորին հետ՝ թեկուզ աշխարհագրականօրէն հեռու մեր աղօթքներով: Եւ կը հայցենք Սուրբ Հոգիին միախառնութիւնը պատրիարք Տոր ընտանեկան պարագաներուն՝ թուրքահայ գաղութի բոլոր կառույցներուն եւ նաեւ հայ ժողովուրդին:

Մեսրոպ արք. Մութաֆեանի երկային կեանքը Աստուածաշունչով ապրուած էր եւ որ կը շարունակուի: Իր՝ եւ մեր բոլորին համար:

Ցաւակցօրէն՝  
ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԺԷՊԵՃԵԱՆ  
Աստուածաշունչի Ընկերութիւն՝ Արաբական Ծոցի երկիրներու

Խաչատուրեան ըրաւ հետեւեալ յայտարարութիւնը, որուն ակնաստես եւ ականջալուր եղած եմ ես.

«Յարգելի ներկաներ, կրնաք իմ ըսածներս հրատարակել, ձայնասփոխել եւ հեռուստատեսութեամբ հաղորդել, եթէ յարգէք հետեւեալ պայմաններս.

1. Դուք անընդհատ գիտ ուսուցում կ'անուանէք: Ես ուսուցում, ես հայ եմ: Կը խնդրեմ որ գիտ սխալ չհասկնաք. ես ուսուցող ժողովուրդը շատ կը սիրեմ, բայց ի՞նչ ընեմ որ հայրս ու մայրս հայ են: Այսուհետեւ կամ հայ կոմպոզիտոր կ'անուանէք գիտ, կամ ալ՝ սովետ կոմպոզիտոր:

2. Դուք հայ ժողովուրդի մասին քիչ բան գիտէք: Պէտք է անպայման նշեք, որ Հայաստան եղած է առաջին երկիրը, որ 301 թ.ին քրիստոնէութիւնը ընդունած է որպէս պետական կրօնք:

3. Պէտք է յիշէք նաեւ որ պաշտօնապէս առաջին քրիստոնէական եկեղեցին կառուցուած է Հայաստանի մէջ, 301-303 թ.ին, եւ կը կոչուի՝ Սուրբ Էջմիածին»:

Հարցազրոյցէն յետոյ, երբ վարպետին հարցուցի թէ հրատարակալին նման յայտարարութիւն ընելը վտանգաւոր չէ՞ իրեն համար:

«Շատ եմ մեծացել, Աստուոր, էլ ինձ չեն կարող ձեռ տալ», եղաւ վարպետին պատասխանը:

## ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

**ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՌԳԻ ԸՍՏԱՐ)**

### ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՍՏԱՐ

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**(626) 797-7680**

# Մեծ Պահոց Խոհեր Խոստովանիլ Եւ Խոստանալ Գործքով Վերադառնալ Դէպի Աստուած

Ապաշխարութեան մասին աստուածաբանական մօտեցումները թերի կը մնան, ըլլալով հանդերձ տեսականօրէն ճիշդ, իմաստասիրական մտորումները եւս կը մնան ակադեմիական: Հաւատացեալը անոնց կարիքը չունի եւ կամ չի հասկնար: Առաջին պատեհութեամբ եւ անպայման ան պիտի դիմէ Աւետարանին:

ԴՊԿՏ. ՋՈՒԷՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

### Երկու Ուղղութեամբ

Մեծ Պահոցի հոգեւոր պատրաստութեան շրջանը կը սկսի այսօր Մարտ 5-ին, եւ մեզի պարտք կ'իջնայ յիշեցնել մեր հաւատացեալներուն ապաշխարանքով եւ խոստովանանքով խոստանալ Աստուծոյ իր պարգեւած ներման շնորհին, գործքով պատասխանել եւ ոչ միայն կրակորակն սպասումով: Ենթակալական ըլլալ այնքան կենսական է այս պարագային որքան ապաւինիլ Աստուծոյ շնորհաց: Խոստովանանքի եւ ապաշխարութեան Հայ Եկեղեցւոյ ընծայած առիթը մէկ ուղղութեամբ չէ որ պիտի ընկալենք, այլ երկու ուղղութեամբ, խոստովանելով եւ խոստանալով, նախ Աստուծոյ դէպի հաւատացեալը, եւ փոխադարձաբար երկրորդ ուղղութեամբ՝ մարդոցմէ դէպի Աստուած, գործքով եւ վճռական որոշումներով, այլապէս միայն ապաւինիլ «Աստուած թողութիւն շնորհեցէ» ներողամիտ պարգեւին եւ ձեռնածալ սպասել մեր մեղաց թողութեան, կը մնայ ձեւական եւ ապարդիւն:

Եթէ ուշադիր կարդանք ինչ որ ամէն կիրակի իմբական կամ անձնական խոստովանանքի ատեն կ'արտասանենք, ամէն մէկ հատուածի մէջ ոչ միայն կը խոստովանենք մեր մեղքերը, կեանքի մէջ գործելի գրեթէ ամէն մեղք թուելով, այլ կը խոստանանք նաեւ զանոնք չկրկնել, նոյնիսկ եթէ հետզհետէ եւ ոչ միանգամայն: Առիթը օգտագործելով կարելի չէ Աստուծոյ շնորհած քառութեան եւ մաքրութեան դիմաց մնալ կրակորակն, ըսելով որ «ամէն կիրակի առիթը ունիմ մեղքերս խոստովանելու» դիւրին ճամբան գտած ըլլալով: Խոստովանանքին «գինը» պէտք է վճարել որ է վճռական խոստումը: «Մարդ ստեղծուեցաւ Աստուծոյ պատկերին համաձայն», որ կը նշանակէ աստուածային կայծ մը կայ ամէն մարդու մէջ որ կարող կը դարձնէ միտքով եւ հոգիով, կամքով եւ ներքին արիւնթեամբ, գործքով պատասխանել նոյն շնորհաց: Խոստովանիլ եւ խոստանալ գիրար պէտք է լրացնեն, այլապէս կը թերանանք մարդկային մեր պարտաւորութեան մէջ «օգնելու» Աստուծոյ տուած պարգեւին մէջ, մենք մեզի օգնած չըլլալով, եւ մեղքի կեանքը շարունակելով:

### Խոստովանանք

Երբ հաւատացեալներ կը կարդան եւ կամ կը լսեն խոստովանանքի յատուկ մեղքերը, այնտեղ նաեւ լռեւեայն կը խոստանան որ «չարաբանութիւն, սուտ, բամբասանք, հայհոյութիւն, որկրամոլութիւն, եւ «յարակից այլ մեղքեր» չգործեն: Վստահաբար խոստումը Աստուծոյ չի պատկանիր, այլ մեղաւոր մարդուն որուն վրայ պարտք կ'իջնայ իր առօրեայ գործերու ակտիվութեան յիշել որ նոյն մեղքերը պիտի չգործէ որքան մարդկայնօրէն կարելի է, մասնաւորաբար Մեծ Պահոցի այս շրջանին երբ քրիս-

տոնեան ուսելիքի եւ հաճոյքներու չափն ու կշիռը իրենց նուազագոյնին պէտք է իջեցնէ: Աստուածատուր «պատկերը» պէտք է վերականգնի մարդու մէջ եւ անով զինուած ան պիտի խոստանայ խոստովանած մեղքերը նախ նուազեցնել եւ ապա բոլորովին իր կեանքէն մաքրել:

Երբ իւրաքանչիւր ինքնուրու պարզութեամբ տուններուն մէջ ճշգրիտ մեղքերուն անուանումը կը կատարուի, հաւատացեալը ինք կ'ըլլայ այդ մեղքերուն ենթական, քանի որ առաջին դէմքով շարադրուած են անոնք: Միայն թուելով եւ խոստովանելով չէ որ մարդիկ կը բանան իրենց ներքին աշխարհը Աստուծոյ առջեւ, այլ զանոնք իրենց բերնէն եւ սիրտէն «մեղայ Աստուծոյ», այսինքն «Աստուծոյ առջեւ մեղք գործեցի» յատարարելով ներքնապէս կը համոզուին որ այդ մեղքերը այլեւս կրկնուելու չեն գործնապէս, ինչպէս ընդհակառակը կը կրկնուին շնորհաց աղբիւրը եղող «Աստուծոյ թողութիւնը», որ միեւնոյն ատեն չի կրնար պատհանութեանց օգտագործման առիթ ընծայել: Աստուծոյ հետ «սակարկութիւն» չէ այդ շարաբերութիւնը, «այսօր կը ջանամ մեղք չգործել, եւ սակայն վաղուան մասին վստահ չեմ» ըսելով: Աստուածաբանական եւ իմաստասիրական դրութիւնները թէեւ ճիշդ եւ սակայն կը մնան սկադեմական, մինչ հաւատացեալը անոնց պէտք չունի եւ կամ չի հասկնար, ան Աւետարանին պէտք ունի եւ հոն պիտի գտնէ իր հոգեկան խաղաղութիւնը:

### Տիրոջ Առակներն ու Հրաշքները

Հաւատացեալին համար Աւետարանական պարզ դասերն են հարկաւոր, այն բոլոր առակները որոնք Տիրոջ կողմէ խօսուած են գլխաւորութեամբ փարիսեցիի եւ մաքսաւորի, անառակ որդիին եւ իր հօր վերաբերմունքը, եւ նման բազմաթիւ առակներու, որոնք հաւատացեալ մարդուն պիտի օգնեն իր խոստովանանքէն ետք «վերադառնալ», ինչպէս անառակ որդին անառակ գիրտնալու «ապաշխարեց», ակառակ ուղղութեամբ, վատնելով ամէն ինչ եւ սակայն վերադարձաւ իր հօրը տունը, վերջիջելով ամէն բարիք, ամէն ապաւէն փորձելով ու թշուառ մնալով: Նոյնպէս նաեւ Տիրոջ կատարած այնքան խօսուն եւ դաստիարակիչ հրաշքները որոնք ամրապէս հիմնուած եղան մեղքի քառութեան վրայ: Եթէ հաւատացեալը իր խոստովանանքով պիտի բուժուի, նախ հիւանդ եւ մեղաւոր ըլլալը պիտի ընդունի եւ Տիրոջ հրաշքով պիտի բուժուի, միշտ յիշելով որ մեղքն է հոգիին հիւանդութիւնը, այնպէս ինչպէս հիւանդութիւնը՝ մարմինին:

«Քառակ լիցին քեզ մեղք քո» եղած է Քրիստոսի կատարած ամէն մէկ հրաշքի պայմանը, որ պարզապէս կը նշանակէ թէ ինչ որ հիւանդութիւնն է մարմին համար, մեղքն է ինչպէս հոգիին համար: Յիսուսի կատարած բժշկութիւնները հիմնապէս կտրուկ այս է որ կը պատգամեն, գլխաւոր պայմանը հիւան-

դին հաւատքը ըլլալով, քանի որ հիւանդը եկած է կամ բերուած Յիսուսի մօտ հաւատքի ճամբով, եւ ոչ թէ փարիսեցիական խորամանկութեամբ «տեսնենք ինչ պիտի ընէ» մտածելով: Առաւել եւս, հիւանդութեան տեսակն ու անոր հրաշքով բուժման հետ մարդու տրուած է աստուածային առանձին եւ գործնական պատգամները: Եթէ անդամալոյծը բժշկուեցաւ մեղքի թողութեանէն ետք, Տիրոջ պատգամը զոյգ թելադրանքը եղաւ, մեղք չգործել եւ ուղիղ քալել: Եթէ խուլն ու համր մարդը հաւատքով մօտեցաւ եւ բժշկութիւն խնդրեց, Տիրոջ պատգամը այս անգամ երեք եղաւ, մեղքերը քառութեամբ են, ուղիղ խօսել, խոստովանել թէ ով բժշկեց քեզ: Նոյնպէս մնացեալ բոլոր հրաշքները առանց բացառութեան:

### Ս Ներսէս Ընդհալի Հայրապետ

Հայ Եկեղեցւոյ 12-րդ դարու տաղանդաւոր Հայրապետը սքանչելի շարականներ ու աղօթքներ յորինած է: Անոնցմէ եթէ միայն «Հաւատով խոստովանիմ» 24 տուն աղօթքը ուշադրութեամբ կարդանք հոն եւս պիտի տեսնենք ապաշխարանքի վերաբերեալ համարներ ուր խոստովանանքն ու խոստումը, կրակաւորականն ու ենթակալականը գիրար կը գրկեն այնքան ներշնչիչ կերպով: Այս աղօթքը եւս անձնական աղօթք մըն է, առաջին դէմքով գրուած, իւրաքանչիւր անձ ինք իրեն վերապահելով մեղքն ու խոստովանանքը, անպայման նաեւ խոստումն ու անոր գործադրութիւնը: «Ամենախնամ Տէր», տունէն սկսեալ մինչեւ վերջը տեսնենք գործնական այն խնդրանքն ու պատգամը որուն մասին կը գրենք սոյն խոհերը: Այսինքն խոստանալ որ մեր միտքն ու հոգին, ականջն ու լեզուն, ձեռներն ու ոտները գործի լծուին, ուղիղ լսեն եւ ուղիղ գործեն: Խղճմտանքս եւ մարմնոյս մեղքերը մաքրուին, կ'ըսուի յաջորդ տունին մէջ, ոչ անպայման ծանրութիւնը Աստուծոյ վրայ բեռցնելով, այլ գիտակցելով որ ինք պիտի ըլլայ մեղքերու մաքրութեան ենթական ու պատասխանատուն: «Իմաստութիւն Հօր Յիսուս» համարին մէջ խորհիլ, խօսիլ եւ գործել «յամենայն ժամ» կ'ըսէ Հայրապետը, շեշտը ենթակալական եւ գործնական դարձնելով, եւ ոչ միայն կրակորակն: «Չար սովորու- թիւններէ դէպի բարի սովորութիւններ» երթալը կը պահանջէ կամք եւ վճռակամութիւն, որուն հետեւանքով մեղքը

պիտի սրբուի մեր կեանքէն ներս: Շնորհալի Հայրապետի մէկ ուրիշ սրտազրաւ շարականին, «Տարածեալ ձեռք ընդ ձեռաց ոտք ընդ ոտից ընթանալեաց» հոյակապ պատկերին մէջ, «ընդ» շարակալը յարատեւ գործածուած է «փոխարէն» իմաստով, ուրկէ պատգամը կը հասնի մեզի, Խաչին վրայ քամուած ձեռքերուն եւ ոտքերուն փոխարէն, գործող եւ ընթացող մեր ձեռքերն ու ոտները պիտի շարունակեն Խաչեցեալին սկսած գործը: Կեանքը պիտի տիրէ մահուան փոխարէն, կ'ըսէ, եւ «եկեղեցին հաստատուելով» Յիսուսի կողէն բխած արեամբ եւ ջուրով, մին Սուրբ Պատարագի ընծայումով եւ միւսը՝ ջուրով Սուրբ Մկրտութեամբ: Այս կը նշանակէ թէ հաւատացելոց խոսմբը որ սուրբ եկեղեցին կը կազմէ երկրի վրայ, պարտաւոր պիտի ըլլայ Խաչը կեանքի վերածելու գործքով, եւ այդ պիտի ըլլայ խոստովանանքին «գինը» իր ընդարձակ իմաստով, անձնականէն ընտանեկան, ընտանեկանէն համայնքային եւ առ հասարակ ի նպաստ մարդկութեան բարօրութեան:

### Ժամագիրքը

Մեր եկեղեցւոյ ժամագիրքը եօթ ժամերգութիւններ կը պարունակէ, սաղմոսներով, աղօթքներով, մաղթանքներով եւ շարականներով հարուստ ուր եւս կը գտնենք մեղքի եւ անոր Աստուծոյ եւ մարդոց յարաբերական կեցուածքի մասին: Յատկապէս աղօթքներէն մին նկատի կ'առնէ, օրինակի համար, «գի մի ունայն լիցին վաստակք ծառայից քոց»: Հոս կը հասկնանք որ հաւատացեալները աշխատանք ու վաստակ պէտք է յատկացնեն թէ՛ եկեղեցւոյ եւ թէ՛ իրենց ընտանիքին համար, խնդրելով Աստուծոյ որ իրենց մեղքերը հակակշռուին անոնց հետ ու Աստուծոյ աչքին նուազ մեղաւոր ըլլան, երբ մանաւանդ կը շարունակէ ըսելով, «այլ համարեա գաշխատութիւնս մեր ի գործ արդարութեան եւ ի պտուղ աստուածապաշտութեան»:

Կ'եզրափակեմ Մեծ Պահոց իմ խոհերը աղօթական մեր քառասնօրեայ ժամապաշտութեանց միասնաբար մասնակից դառնալով սովորականէն աւելի անդին, հետեւելով առաւօտեան Արեւազալի ժամերգութեան՝ Քրիստոս որպէս Լոյս Աշխարհի, եւ երեկոյեան Խաղաղական եւ Հանգստեան ժամերգութեանց ուր յանուն մեր Փրկչին կը փայլին երկու մեծագոյն սուրբերը Հայ Եկեղեցւոյ՝ Սուրբ Գրիգոր Նարեկացին ու Սուրբ Ներսէս Շնորհալին իրենց գերազանց աղօթքներով եւ երգերով:

NEW FAMILIES RECEIVE \$100 OFF REGISTRATION

Accelerated academics and so much more!

Our kids are:

- Leaders
- Initiators
- Communicators
- Respectful
- Creative
- Critical Thinkers
- Advanced Academically

Contact us today for a tour of our campus  
salemutheranglendaleschool.org | (818) 243-8264

Igniting Leadership in the Next Generation!

Our Signature Leadership Program Includes:

- Civics Programs
- Steven Covey's "Leader in Me"
- Peer Coaching
- Mentoring and Discipleship
- Entrepreneurship
- Service Opportunities
- Debate Team
- Student Council
- And more...

# Բանաստեղծ Գրիշ Դաւթեանի Երկու Գրքերի Ներկայացում



## Ռ. ԿՈՐԻԻՆ

Ուրախութեամբ եմ ընդառաջում, երբ լսում կամ հրաւիրւում եմ գրքի ներկայացման հանդիսութեան: Գրքի աշխարհը իւրայատուկ ու անեզր է անգին գանձերով ընդելուզուած, ով գրքի ճամբով է գնացել, նա է իմացել գրքի արժանիքը եւ նրա միջոցով իմաստաւորել է կեանքը: Գիրքը գիտուն մարդու մտքի, ուղեղի արգասիքն է, գիշերները լուսացնող գրողի սրտի եւ հոգու անբիծ զգացումների բխումն է:

Յաճախ լսում ենք՝ թէ մարդիկ գիրք չեն կարդում, նոր գրքեր քիչ են գրւում, նրանք ասում են՝ որ համակարգիչը ամէն տեսակ տեղեկութիւններ փոխանցում է մարդուն: Հասկանալի է, որ համակարգիչի կայսրութիւնը ամէն ինչ իրենով է արել, իր համատարած ցանցում-կայքերում ներգրաւելով դարձել է ամենագէտ եւ տեղեկատուութեան միջոց եւ շատ հեշտ ու դիւրին ցանկացող մարդուն փոխանցում է այն ինչ գրքերի միջոցով ներարկուել է իրեն, ոչ մի առարկութիւն, փառապանք գիտնականներ, հրաշք ստեղծագործութիւն, սակայն գրքի պարագայում որոշ վերապահում եւ տարբեր մօտեցում կայ, երբ գիրքն առնում ես քո ձեռքերում, շօշափում ես, նա մերում է քո հոգեման հետ, նոր հոգեմիճակ ու ներշնչանք է արթնացնում քո մէջ, հետեւաբար գիրքն անուրանալիօրէն իր արժէքն ունի եւ հեղինակը մեծարելի: Այս աւելի՛ գրքի մասին իշխենք երջանկայիշատակ Գարեգին Ա. Կաթողիկոս Սարգսեանի մէկ ասոյթը գրքի մասին՝

«Գիրքը մի՛ արհամարէք»: «Եթէ ձեզմէ մէկը գիրքը արհամարէ եւ հայ գիրքը անտեսէ, աւելի լաւ է, որ հայոց սա բարձրաբերձ լեռներու սեպ գագաթներէ ինքզինք վար նետէ դէպի անդնդախոր ձորերը եւ դառնայ ժայռերու կերակուր...»:

Այո՛, գիրքը արժէք ունի եւ գովասանքի արժանի, այդու նոր հրատարակուած երկու գրքերի շնորհանդէս էր:

Փետրուարի 26, 2019 թ. Երեքշաբթի Լոս Անջելէսեան իբր թէ ձմեռային եղանակ, բայց ոչ սարսուռեցնող, այլ հաճելի սառն ամպամած երկնքով երեկոյեան ժամ կազմակերպուած էր գրքի շնորհանդէս Գլենդէլի «Ապրիլ» գրախանութի «Թորոս Ռոսլին» ցուցասրահում:

Հանդէսի մեկնարկումը կատարեց գրախանութի տնօրէն՝ Առնօ Երիցեանը ասելով՝ «Ուրախ ենք

ձեզ ներկայացնելու հեղինակ բանաստեղծ Գրիշ Դաւթեանի հրատարակած երկու հատորները՝ «Անձրեւ է գալիս» եւ «Ամերիկեան թրթիռներ» գրքերը: Շատ ուրախ ենք, որ այսպիսի աշխուժ գրող ունենք մեր համայնքում»: Նա նաեւ որպէս հանդիսավար շնորհաբար բեմ հրաւիրեց գրքերը ներկայացողներին:

Համայնքում ճանաչուած եւ սիրուած անձնաւորութիւն ու <Armenian Observer > թերթի խմբագիր պրոֆ. Օշին Քէշիշեանը հանգամայն ներկայացրեց Գրիշ Դաւթեանի կենսագրականը անդրադառնալով նրա դերակատարութեանը ազգային-հասարակական, միութենական, խմբագրական, հրատարակչական եւ գրականութեան բնագաւառումներում՝ Պարսկաստանում, Անգլիայում եւ ապա Լոս Անջելէսում-Գլենդէլ, նաեւ նշեց պարգեւատրուած ՀԳՄ եւ ամենայն հայոց կաթողիկոսի Սրբ. Սահակ եւ Սրբ. Մեսրոպ ոսկէ շքանշաններով, լիչեց նաեւ Իտալիոյ Միլանօ քաղաքի միջազգային մրցոյթի առաջին դասնակրի պատիւը: Օշին Քէշիշեանը իր արտայայտութեան մի այլ հատուածում այսպէս բնութագրեց Գրիշ Դաւթեանին՝ «Տարիներու փորձառութեամբ յագեցած տարբեր երկիրներու մշակոյթների բովէն անցած կեանքի հարուստ փորձ է կուտակել...այսպէս մշակուած եւ բազմազբաղ անձ մը ժամանակ գտած է նուիրումով տաս հատորներ հրատարակել 1964-էն սկսեալ՝ մէկ հատորն ալ բանաստեղծութիւններու հաւաքածոյ անգլերէնով Ամերիկայի մէջ»: Օ. Քէշիշեանը նոր երկու հատորների մասին խօսելով եզրակացնում է՝ «Գ. Դաւթեանը աւելի խորացած է գաղափարական տուեալներու մէջ, հայրենասիրական երանգը ժամանակի հետ քայլ պահած է, սիրոյ ոլորտին մէջ աւելի անկեղծ եղած է անցեալը վերլիշելով»: Ինչ էջերի մէջ ամփոփուած Օշին Քէշիշեանի խօսքը առանձին մի յօդուածի ատարղձ է փաստ ոչ պարփակուելիք մեր այս տեղեկատուական գրութեան մէջ:

Սրտի ջերմ խօսքով ելոյթ ունեցաւ գրող Ռուբէն Կորիւնը (Քէշիշեան), լիչենք մէկ հատուած նրա խօսքից՝ «Գ. Դաւթեանը հրատարակել է գրքեր, որոնք ներկայացնում են հեղինակի ջերմ զգացումների սիրոյ աշխարհը հայրենիքի, ազգի, գրականութեան եւ մշակոյթի հանդէպ: Գրքեր, որոնք արտայայտում են հեղինակի յոյզերը, մտքերն ու մտորումները տարբեր երեւոյթների շուրջ՝ լոյս եւ

ստուեր: Գրքեր, որոնք արտացոլում են ծննդավայր երկրի, հօրենական տան...ընտանեկան օջախի ջերմութիւնները...նա լաւապէս ըմբռնել է կեանքի իմաստը եւ ըստ այնմ հարագատորէն շարադրել է իր մտքերը...»:

Ամունքով ելոյթ ունեցաւ Այլին Քէշիշեանը «Անձրեւ է գալիս» գրքից պարունով ընթերցեց՝ «Հայոց պատմութիւն» քերթուածը:

Ամբիոն հրաւիրուեց ճանաչուած գրականագէտ եւ բանաստեղծ Գեորգ Քրիստինեանը Գրիշ Դաւթեանի գրականութեան վերլուծականը ներկայացնելու համար, նա այսպէս սկսեց իր ելոյթը՝ «Ուրախալի օր է, որ անդրադառնում ենք մեր գրականութեան: Գրականու-

րախ էր, որ մշակն արժանանում է իր վարձին տարիների իր կատարած ազգօգուտ եւ մշակութային աշխատանքների ու գրականութեան համար, այդպէս եւ այդ տրամադրութեամբ շնորհակալութեան խօսքը ուղղուած է երեկոյի դերակատարներին եւ ներկաներին ասում է՝ « Խորապէս շնորհակալ եմ, ես գնահատանքով եմ վերաբերում ձեր հանդէպ»: Նա մեծապէս շնորհակալ եղաւ կնոջից, ացջկանից, փեսայից, տղայից եւ հարսից, որ ամեն տեսակ օգնութիւններով իր հանգստաւէտ կեանքի եւ գրելու մասին են մտածում: Նա շարունակելով իր խօսքը ասաց՝ «Գրականութեան մասին ինչ որ ընկերները արտայայտուեցին ես իսկապէս



թիւնը պիտի ունենայ իր հողը, իր հողի վրայ գարգանայ, սակայն այսպէս է եղել, որ աշխարհի տարբեր ծայրերում ենք ընկել եւ տարբեր ծայրերում աւելի դժուար պայմաններում ստեղծում ենք գիրք ու գրականութիւն, այդ գործում անգերազանցելի է Գ. Դաւթեանի անձնական ներդրումը: Հիմա որ Հայաստանում լոյս են տեսել այս երկու գրքերը ես որոշ չափով ծանօթացայ նրանց հետ, իսկապէս Գ. Դաւթեանը արդէն ժամանակակից լաւագոյն բարձրարուեստ գրողների շարքին է պատկանում եւ լաւագոյն բանաստեղծներից է համարում»: Այնուհետեւ Գ. Քրիստինեանը ընթերցեց հատուածներ իր գրախօսականից՝ «Պոետական նոր մի աշխարհ» ընդգրկուած՝ «Անձրեւ է գալիս» գրքում, չկրկնուելու համար խորհուրդ ենք տալիս հետաքրքրողները թող ընթերցեն: Վերջում նա խօսքն ուղղելով մեծարեալին ասաց՝ « Ես շնորհաւորում եմ Գ. Դաւթեանին եւ ընդհանրապէս մեր ժամանակի այն մարդկանց, ովքեր գրաւում են բանաստեղծութեամբ, ովքեր գգում են բանաստեղծութիւնը երաժշտութիւն է, նկարչութիւն է, մեր արուեստն է, որ ժողովրդին ճանաչել է տալիս աշխարհին եւ այդ աշխարհը պիտի հարստացնենք Գ. Դաւթեանի նման»:

Սրտի խօսք ասաց Գրիշ Դաւթեանի որդին՝ Հարմա Դաւթեանը «Յիշում եմ, մի օր դասերս էի սովորում, հայրս սենեակ մտաւ խօսակցութեան ժամանակ ասաց, գիտե՞ս իւրաքանչիւր գիտութիւնից ինչքան ես կտրուած, այն հաստութեամբ գիրքը ներկայացնող, նա ձեռքի մասնէրով ցուցադրեց մի սովորական գրքի հաստութիւնը, երբեք չեմ մոռանում»:

Հանդիսավարին միջոցաւ ամբիոն է հրաւիրուում մեծարեալ Գ. Դաւթեանը, նա յուզուած էր այդ բոլոր մեծարանքի եւ գնահատանքի արտայայտութիւններից, ու-

շնորհակալ եմ, որով ինձ հարկադրանքի տակ են դնում առաւել պատասխանատու զգամ ինձ, որը լուրջ խնդիր է»: Սիրոյ մասին նա ասաց՝ « Հին աշխարհը սիրոյ շնորհիւ է այսօրուայ աշխարհը դարձել, առանց սիրոյ կեանքը դժոխք է, իմ գրականութիւնը կառուցուած է սիրոյ վրայ, ես սիրերգակ եմ եւ ոչ այլ բան»: Նա իր խօսքի աւարտին ընթերցեց իր «Գիտնէճօն» խորագրով գողտրիկ բանաստեղծութիւնը, որը նոյնութեամբ ներկայացուած է՝

Սիրտս որպէս սիրոյ սկիհ, սէրս մէջը հիւր գիցի, Բարձրացնում եմ լի գաւաթս իմ ժողովուրդ հայրենի:

Նաւասարդի Գուրապան Գուրապանով պրեզենտ Ես խմում եմ քո կենացը մալթաճերմութիւն հրեղէն:

Աւերաբերի Գնչամպու Գամպքո ճակատին բախուեցի՜ն Դու տոկացիր հաճց դիւցազուն թուր-կեծակի Սասունցի՜ն:

Որ մեկնեցիր ձեռքդ հզօր ու խաւարի ընդմիջից Պիմո բռնեցիր արեգակը, իսկ խրեցիր արեգակը, Շանթ շորթեցիր արեգակը յաղթանակով սխրալից:

Ու պիտի գամես արեգակը Արարտի գագաթին, Նոր կեանքի նոր ոգով զեղուն քո արեւը իրային:

Սիրտս անկեղ, վառ մորենի, սէրս ճիւղին անհանգ բոց, Ես խմում եմ սուրբ կենացը իմ ժողովուրդ, իմ հայոց:

\*\*\*  
Երեկոյթի ծրագրի աւարտին պատրաստուել էր համեստ ընդունելութիւն: Գնահատելի եւ հետաքրքիր ձեռնարկ, ջերմ եւ սպաւորիչ մթնոլորտ:

### Հարսանիք Չանգեգուրի Շուռնուխի Գիւղի Բանաւանում

ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ (Շարունակելի 2 - «Մասիս» Յունուար 26-ի թիւ 03-ԵՈ)

Շուռնուխի Գիւղի «Փայտամշակման Գործարանի» բանաւանի ճնապարհին Քարահունչ գիւղին է: Քարահունչ, Հայաստանում համբաւաւոր Քարահունչի թուփի օդի, նրա մէկ բաժակը բաւական է մարդու միտքը ալեկոծուէր, փոթորիկ ցանէր սրտի արեան հնձանում, նրա մտքի ենթագիտակցութեան ծալքերին քաջութեան կոբոլ յորդէր: Աշուն էր, դեղին շապիկ էին հագել հսկայ թթենիները, նրա սիրուն տերեւները քամու օրօրից ընկնում հողին: Վաղ ամռանը, Յունիսի սկզբներին, թուփն էր հասունանում, ծառերի ոստերին շարան-շարան ճերմակ թուփ, դիւղի շէնքերի ընտանիքների ամէն դռանը թթենի կար, խնձոյք էր թուփի թափ տալը, փոքրերի, մեծերի տօնական հրճուանքն էր այն: Փոքրեր, մեծեր մատներով, ափերով ճաշակում մայր բնութեան առաջին հասունացած պտուղը, բնութեան պարզեւի տօնախմբութիւն էր այն: Շատ համեղ է, անուշ է սպիտակ թուփը, նրանից պատրաստում էին անուշեղէնի պահածոյ, պաստեղ, արեւի տակ չորացած թուփ, մնացածը, լցնում տակառներ: Բնութեան խմորիչները խճուռում այն, նրա համեղ շաքարը վերափոխում ալիոհոլի, նրանից օդի թորում, վերաթորում, որ աւելի բարկ լինէր:

Գիւղից յիսուն կմ հեռու սարահարթում Քարահունչի «Չորաց քարեր», 7500 տարիների շունչից մամրակալած 203 քարեր, որոնցից ոմանց կշիռը աւելի քան 50 տոննա: Աստղագարդ երկինքը դիտելու համար նրանց ճակատներին, տարբեր ուղղութիւններով ու դիրքերով անցքեր էին: Բորիս Հերուտի, առաջինը «Ռատիոպտիկական» հեռագիտակի ստեղծողը, Քարահունչի կառուցք բացառապատել էր որպէս աստղադիտարան լինելու իրողութիւնը ու նրա կապը այլ մոլորակների ու արտերկրային այցելուների հետ: Տարբեր աստղագետներ էլ այն համարել էին հնագույն աստղադիտարան, տիեզերքի անհունների ուրիշ երկրների մարդկանց ժամավայր: Մարդակերպ հակների պատկերներ են փորագրուած տեղի բազում քարերի երեսներին: «Արիական Միաբանութեան» Արմին-հայեր, իրենց արեւի աստուած Միհրի արեւագալի ծնունդ են այնտեղ տօնախմբում:

Որոտան գետի ոլորանների լանջին արեգակն էր իր հուրը կաթել, այնտեղ բուսել էին խաղողի ու նուռի տնկիներ, ասում էին վայրի էին: Որոտանի ոլորաններում լանջին ու նրա ափին ատրպէյճանցի մի քանի ընտանիքներ ապրում, գողացած հողի բարիք վաճառում այնտեղից անցնող հողի տէրերին: Է՛հ, արի Արմին-Հայ մարդ, ինչպէս հանդուրժեցիր, որ մինչեւ կապան գնացող այդ ճանապարհի միւս կողմի Սիւնեաց աշխարհը գատէին քեզանից, հիմա էլ աշխարհի դռներ ընկած քեզանից զաւթուած հողն են պահանջում: Որոտան գետի ափեր, հեռուներից եկած ջրերի վազք, ալիքները գարկում իրար, փրփրում, փոթորիկ ցանում՝ գնում Մայր Արաքսի գետի ալեկներին հետ փարուած: Ջուր

ցօղել մեր երեսներին, որ հայրենի երկրի ընդերքից ելած շունչի հեւքը հոսէր մեր սրտերին, ահնապիչ նայել նրա ալեկներում պար տուող կարմիր իրաններով «Կարմրախայտ» ձկներին:

Ճանապարհի եզրին հնձած ցորեանի դեղին գոյնի խոզանի տափարակ դաշտ, «Մեզրէի Դաշտ» ասել էին նրան: Նրա թփուտների հովին կանաչ խոտ էր՝ գնացել էին «Մորի»՝ վայրի ելակ, փնտռել այնտեղ: Շատ-շատ տարիներ առաջ, ուշ գարնանը, այդ դաշտ էր գնացել, կանաչ խոտը քրքրել, հասունացած մորի հաւաքել՝ տան փոքրերի համար բանաւան տարել: Մորի, կարմրուկ փոքրիկ հատիկներ, համը արեւային, հոտը փրփրոն ծաղիկ, ասում էին այն ճաշակողը «Տղայ կը բերէր»: Դաշտ էին իջել, թփուտների կանաչում մորի հաւաքելու, աշուն էր, մորի մանր թփիկները քուն էին մտել, այլեւս չէին ծաղկում, սիրուն սպիտակ փոքրիկ ծաղիկներ, հոտաւէտ ծաղիկներ, մորիի բոյն էր նրանց թերթիկներին: Շուռնուխի բանաւան տանող ճամբաներ, նրա երկու կողմերին խիտ անտառներ, որտեղ Շուռնուխի բանաւանի փայտամշակման գործարանի արտադրական հումքի Բոխի ծառերն աճում: Հանրակառքը դադարացրել էր վազքը, կանգ արել Շուռնուխի ու բանաւան տանող խաչմերուկին:

Շուռնուխի գիւղ, կոբու էր եղել նրա համար, փախել էին ատրպէյճանցիները, չբացել էր նրանց ստուերը Հայոց հողից: Գիւղը բարեկարգուել էր, տները առաջ բանջարատնոցներ, խնձորենի ծառերին հազար գոյնի խնձոր, յիսուն օճախների ծխաններից ծուխ բարձրանում: Շուռնուխիի դիմաց բաց տարածք էր, հատանել էին ծառերը, փայտը տարել իրենց մանչերին տաքացնելու ու որպէս շինանիւթ օգտագործելու: Շուռնուխի բարձունքից երեւում էին բանաւանին մօտիկ ատրպէյճանական Սէյդաս գիւղի աւերակները, հայեր հրկիզել, փլել էին այն, կոռուի տեսն նրա բնակիչները փախել էին:

Գնացել հայացած գիւղի նոր դպրոց: Տնօրէնի ընդունարանում էինք, երկու նուրբեալ այր ու կին ուսուցիչներ, առանձին ու միացուած դասարաններում, շուրջ յիսուն մանչերի սրտերին հայրենի ու այլ իմաստունների մտքերի լույսն էին կաթում: Զրուցեցինք Հայոց մշակույթի ու գրականութեան հմուտ գիտակ տնօրէնի եւ ուսուցիչ ամուսինների հետ, գուարթ էին, որ իրենց ազգի առաջին ուսուցիչ Մաշտոցի նման Սիւնեաց աշխարհի այդ լեռներում իրենց մանչերի հոգիներին Հայերէն գիր էին սերմանում: Լուսանկարուցիք, խոստումի համաձայն յետագային նրանց ուղարկել էի լուսանկարները եւ իմ հրատարած գրքում նրանց մասին յիշատակած գրոյցը: Քիչ ներքեւ նախկին դպրոցի շէնքի փլատակներն էին, նայցի հեռուից, մօտ չգնացի, յուշերս մնային կենդանի:

«Պատմութիւնը պատմելով, գրելով է, որ պատմողը կը վերստեղծէ իր ինքնութիւնը» պիտի պատգամէր՝ իմաստուն Սիւզան Ուրիթիկ Ալպերթ: Շուռնուխի փայտամշակման գործարան, Լեգէնաւան կապորալ Լազիսեան Արմենակի ութ ձողիանոց ընտանիքի Հա-

յաստան հողին կեցութեան առաջին «բոյն»-ն էր, վեց-եօթ տարիներ խաղաղութեամբ ապրել այնտեղ, մանչերը մեծացել, «Նոր Տարի» տօնախմբել, հարսանիք արել: Մեր լեռնական մարդկանց հոգիներում, սրտերի արեան ծոփակներում Արարատի ճերմակ գագաթի նման Շուռնուխի բանաւանի յուշերն են, պարտիմ պատմել այն, պատմել բանաւանի կեանքի հեւքը, աշխարհին պատմել նրա մարդկանց յուշը, գուցէ ապագայի մի պատմողին կը հետաքրքրէր բանաւանի այդ արի մարդկանց պատմումները: Հատանել էին հարիւր տարիների հաստաբուն Բոխի ծառերը, արեւի ճառագայթները հասել հողին, էրբ գետին ընկած նրանց սերմերը ծիւ պիտի արձակէին, մեծանային, ծածկէին հողը, որ անձրեւի ջրերը չտանէին այն: Գործարանի գործարկումը Չանգեգուրի լեռների լանջերն էր ամայեցնում, միակ նպաստաւոր բարի ելքը մօտիկ շէնքերի մարդկանց աշխատանքի առիթ ստեղծելն էր, նրանց ընտանիքների բարուք կեցութեան նպաստելը: Ընտանիքներով բանաւանում աշխատում էին մօտակա շէնքերի մարդիկ, յայտնի որսորդ Արտաշ, առաքիչ Լեւոն, վարորդներ Սէրոփ ու Գուրգէն, ատաղձագործ Լազար, Արշակ Տայի, սողոցարանի Աշոտ, շրջանային խորհուրդի պատգամաւոր Հայկանուշ, ուրիշ շատ-շատեր եւ Շուռնուխի գիւղի ատրպէյճանցիներ:

Չանգեգուրի Գորիսի շրջանի տարածքի այդ ձեռնարկութեան գործարկման տարեթիւը չեմ իմանում: Այնտեղ էին պաշտօնավարել «Երկրորդ Համաշխարհային Պատերազմի» ընթացքում ընտանիքներով Ռուսաստանից տարագրուած մարդիկ: Կարելի էր ենթադրել, որ պատերազմից առաջ գործարանը պիտի գործարկուած եղած լինէր: Ռուսաստանի հիւսուածոյ արտադրանքների ձեռնարկութիւնների հաստոցների մագոգներ պատրաստելու համար անհրաժեշտ եղել ամուր փայտանիւթ: Յարմար էին համարել նրանց պատրաստման համար օգտագործել Հայաստանի Չանգեգուր շրջանի Գորիս-Կապանի լեռներում աճող Բոխի ծառերի փայտանիւթը օգտագործել: Այդ լեռների սրտում ամբարուած բազմամետաղները իրենց ամբողջին են հոսել նրանց երակներում, ամուր դարձել ինչպէս իրենց շէնքերի ու աւանների մարդիկ, որոնք Քաջ Նազարի դէմ կոռուի ելած «Հսկաների» նման կանգնած կարմիր Ռուս զինուորների ու ատրպէյճանցի աւազակների դիմաց, խափանել էին Չանգեգուրի տիրելու նրանց կամքը:

Գործարանի աշխատանքը ուղորդել էին ուսումնասիրողներ: Թէեւ գործարանի տնօրէնը արցախցի Եղիշէ Բալայանն էր, սակայն նրա արտադրական գործունէութիւնը վարել էին ճարտարագէտ Կարալեւակին, տեխնիկական վերահսկողութեան պետ Յաշան, էլեկտրական ներուժ մատակարարող Պանդիլէյը, արտադրական վերահսկողութեան ղեկավար Կրասնողար քաղաքից Կիսելյովը: Նրա կին Փաշան, ուսուսական բոլորն համով հաց էր թխել գործարանի աշխատողների համար: Գործարանի գլխաւոր հաշուապահը՝ շրջանի խոտանան գիւղի Արտեմ Բաղտասարեանն էր, սակայն հաշուապահութեան սիրտը նրա տեղակալ Մարիա Վիթթորովան էր, որը որդի ունեցել, ապա շարունակել

ապրել Գորիսում, մահացել այնտեղ: Հաշուապահներ էին բանաւանի Տաթեւցի Գուրգէնի կին Ջապէլը, Բարձրաւանցի Սիմոն Տայցի որդի Սաշիկը: Ռուս մարդիկ բանաւանում ապրել էին ընտանիքներով, իսկապէս բարի մարդիկ էին, տեղի Հայ բնակիչների հետ խաղաղ ու շատ սիրալիկ միասին աշխատել, ապրել: Գործարանի բակում էի, Կիսելյովը թարգմանի միջոցով բացատրել, որ կուզենայի արդեօք գործարանում իր ենթակայութեան խոտանող աշխատել: Աշխատանքի ծարաւ էի, համաձայնել աշխատել: Տարել գործարան, հաստոցի մօտ բացատրել արտադրանքի խոտան լինելու յատկանիշները: Յաջորդ օրը աշխատանքի նշանակուել որպէս խոտանող: Առանց բացառութեան խոտանել էի ոչ ըստ սահմանուածի որակի արտադրանքը: Տնօրէնը կանչել էր գրասենեակ, թէ «Այ խոխա՛ պլան պիտի կատարենք, գնա՛ քիչ խոտանիր»:

Գլխաւոր հաշուապահ Ա. Բաղտասարեանը հրաւիրել էր տուն, կինը Ռուս էր՝ Քսենիա, զաւակ չունէին: Մինչեւ հիմա է յիշում նրա ցաւը, պատերազմի վերջին օրը Բենիլլում գոհուել էր որդեգիր գաւակը: «Երեւի ճակատագրով ինձ սահմանուած էր անզուակ քայլել իմ յաւերժութեան ճանապարհի երթին» ասել էր Բաղտասարեան Արտեմ Տայցին: Ռուսերէն տառերն էր գրել, նրանց համազօր հնչիւնները Հայերէնով:

Սովորել էի Ռուսերէն տառերի հնչիւնները, փորձել ուսուցիչն կարգալ, կարողացել էի: Գնացել նրա մօտ, ուսուցիչն կարողացել: Զեռագիր էլ կարողացել էի կարգալ: Իր թեւադրանքով, յաջորդ օրը գործարանի գանձապահ պաշտօնին էին նշանակել: Գործարանի հաշուապահութեան վավերագրերի փաստաթղթերը կազմուած չէին եղել, Ա. Բաղտասարեանը հարցրել՝ կարո՞ղ էի այն կազմել: Լաւ էր, որ Մելգոնեանում գիրք կազմել էի սովորել, սիրով համաձայնել էի: Գրքերի ձեւով արագ-արագ կազմում էի վավերաթղթերը, Ֆինանսիստ Հոխիսիմէ վարդապետներ թելադրել էր կամաց աշխատել, եթէ շուտ վերջացնէի քիչ կը վճարէին, ա՛յ քեզ յայտնութիւն, պէտք էին կամաց աշխատել որ աւելի շատ վարձատրէին: Գործարանում Հոխիսիմի «Փեսայ» էին կանչել ինձ, իր տասնըինը ամեայ դուստրին Երեւանից բանաւան բերել... երեւի այլ մտադրութեամբ... իրենց տանը՝ ես Անգլիերէն, ինքը Ռուսերէն էինք իրարու ուսուցանել, չեղաւ... չկարողացաւ իմ ջանքը սրտում մարել Մելգոնեանի իմ դասընկերոջ հանդէպ տածած սիրոյ կրակը: Նա Բուլղարիայից Հայաստան-Երեւան ներգաղթել, հեռաձայնի ընկալումն էր «Պողոս-Պողոս» կանչի սիրոյ կրակի ճարձատիւնն էր նորէն սիրտս այրել:

Յաճախ գործողողում էի կապանի քաղաքային բանկ, գործարանի ֆինանսական փաստաթղթաւորումը կատարելու, բանուորների ու այլ պաշտօնեանների աշխատավարձը վճարելու կանխիկ գումար ստանալ: Յունիս ամսուայ տասնընոսիս, նման մի գործողողման ատեն ճանապարհին հանդիպել աքսորական հայերի ինքնաշարժերի երթին, ա՛յ նրանց ցաւը ինչպէս նորէն պատմեմ, նորէն եղեոն չէր այն:

Կեանքը տօն է, վայելիւր այն



# Ձեր Ծնած Ամիսը Ցոյց Կու Տայ, Թէ Ինչպիսի Թագուհի Էք

Յունուար: Համբերատարութեան թագուհի: Դուք կը յաղթահարէք այն ամէնը, ինչ ձեզի համար նախապատրաստած է ճակատագիրը, չէք խոնարհեր գլուխը, չէք դժգոհիր, իսկ ըն - թացքին նոյնիսկ խորհուրդներ կու տաք ուրիշներուն: Բայց եթէ ձեր համբերութեան բաժակը լեցուի, բոլորին խորհուրդ կու տանք հնարաւորինս հեռու փախչելու: Դուք չէք ներքեր դաւաճանութիւնը:

Փետրուար: Նպատակներուն հասնող թագուհի: Դուք վստահ էք ձեր ուժերէն, երբեմն նոյնիսկ ինքնավստահ էք, յամառ ու հպարտ: Պատրաստ էք դժուարութիւններու, չէք վախնար լուրջ որոշումներ ընդունել: Նման յատկութիւններու հաւաքածոյով դուք ի ծնէ ղեկավար էք: Միաժամանակ, շատ կը սիրէք փոք ըրկները: Այդպէ՞ս է:

Մարտ: Իսկական օրիորդ թագուհի: Դուք չափազանց զգայուն էք, քնքուշ, խոցելի, նուրբ ու համեստ: Եթէ նոյնիսկ յամառ էք, ատիկա նոյնպէս քնքուշ տեսք ունի: Դուք ի ծնէ ճաշակ եւ ոճի զգացում ունիք: Ձեր նման թագուհիները կը գրաւեն միայն իսկական թագաւորներ, որոնք պատրաստ են ասպետութիւն պաշտպանելու եւ պահպանելու ձեզ:

Ապրիլ: Ապստամբ թագուհի: Դուք ռեւել մէկուն կանոնները չէք խախտեր: Պարզապէս կ'ապրիք ձեր կանոններով: Դուք վճռական էք, համարձակ, անկեղծ, ունիք իւրապատուկ կանացի մագնիսականութիւն, որ առաջին հայեացքով կը սնայէ տղամարդը: Դուք վարժուած էք, որ ամէն ինչ ձեր ուզածով պէտք է ըլլայ:

Մայիս: Մարտնչող թագուհի: Մի՛ գարմանաք: Այո՛, դուք արտաքինով հանդարտ տնային տնտեսուհի էք, բայց հոգիի խորքով՝ խիստ եւ արդարացի մարտիկ: Դուք վճռական էք, համարձակ, իսկ ձեր կամքի ուժին բոլորը կրնան նախանձիլ: Այս ամէնը մայիսեան թագուհիներուն կ'ապահովէ յաջողակ կեանք:

Յունիս: Պայծառատես թագուհի: Դուք հրաշալի ձեւով կը հասկնաք մարդոց, միաժամանակ շատ բարի էք ու կը խուսափիք խնդիրներէն: Վեցերորդ զգայաբան ունենալով՝ դուք կը կանխատեսէք ապագան, հակառակ անոր, որ երիտասար դու - թեան տարի-

ներուն հազուադէպ կը վստահիք այդ կանխագագուծին:

Յուլիս: Տղամարդոց սրտի թագուհի: Գեղեցիկ եւ զիջող աղջիկներ են, որոնք մանկութեան տարիներուն կրնան տառապել իրենց մայրերու իշխանութենէն: Սակայն առաջին իսկ հնարաւորութեան պարագային անոնք կը բացուին՝ նման հրաշալի ծաղիկի, որմէ հնարաւոր չէ անջ կտրել, թէեւ իրենք այնքան ալ մեծ նշանակութիւն չեն տար արտաքինին: Առաջին յարաբերութիւնները կրնան ձախողիլ, բայց իբրեւ արդիւնք կը գտնէք ձե՛ր տղամարդը:

Օգոստոս: Թագուհիներու թագուհի: Դուք ի ծնէ առաջնորդ էք, կրնաք հասնիլ այն ամէնուն՝ ինչ կ'ուզէք, ձեր ետեւէն տանելով մարդիկ: Բայց, ամէն պարագայի, ձեզի համար կարեւորը տունն ու ընտանիքն են: Ատիկա ցոյց կու տայ ձեր անկեղծ կողմը, որմէ շատերը կրնան օգտուիլ:

Սեպտեմբեր: Կախարդ թագուհի: Խնամուած, համեստ արտաքինով, բայց առանձնայատուկ հմայքով, որ կրնայ գերել տղամարդը: Այո՛, դուք համեղ կերակուրներ կը պատրաստէք, բայց ատիկա տեսակ մը մոգական, կախարդական բան է: Գոնէ դուք կը հասկնա՞ք, թէ որն է ձեր գաղտնիքը:

Հոկտեմբեր: Չգայնութեան թագուհի: Դուք կ'ապրիք զգացմունքներով, եթէ նոյնիսկ արտաքինէն պաղ կը թուիք: Դուք սառուց եւ կրակ էք: Ճակատագրական կին, որ կը գերէ տղամարդը, թէեւ յանուն գուարճանալու կրնայ յիմարիկի վերածուիլ: Սակայն հանդարտ ճահիճի մէջ...

Նոյեմբեր: Գուշակ թագուհի: Դուք կրնաք սիրել, անվիճելի է: Դուք կը բոցաբար, հրաշածօն (charismatic), կը հասկնաք մարդոց: Նաեւ կրնաք երազել բաներ, իսկ ունակութիւնները զարգացնել - լուպարագային կրնաք նաեւ կախարդել: Ինչ է, դեռ չէ՞ք փորձած:

Դեկտեմբեր: Թափառական թագուհի: Եթէ նոյնիսկ ամբողջ կեանքի մէջ միեւնոյն տեղը կ'ապրիք, հոգիի խորքով՝ թափառական կը մնաք: Կրնաք օրինակելի կին, տանտիրուհի, մայր ըլլալ, բայց ձեր երազանքները... Աստուած չընէ՛ ունէ մէկը գիտնայ անոնց մասին: Ձեր երազանքները կրնան անսպասելիօրէն կատարուիլ, քանի որ թեթեւ եւ վառ հոգի ունիք:

## Կանոններ, Որոնք Կ'օգնեն Որոշում Կայացնելու Եւ Չզղջալու

Մի սպասէք կատարել պահի եւ լսեցէք ձեր մարմնի տուած ազդանշանները:

Երբ մարդը հնարաւորութիւն կը ստանայ, պէտք է ընտրութիւն կատարել՝ փոխել կեանքը կամ ձգել ամէն ինչ, ինչպէս՝ նախապէս: Աշխատանքի փոփոխութիւն, ճանապարհորդութիւն, ամուսնութիւն, ոչ ոք գիտէ, որ ինչպէս կը փոխուի ձեր կեանքը կարճ ժամանակահատուածի մէջ: Երբեք չէք կրնար ըսել, թէ ինչպիսին պիտի ըլլար ձեր ճակատագիրը, եթէ ժամանակին այլ որոշում կայացնէիք: Բայց, արդեօ՞ք գոյութիւն ունի միայն մէկ ճիշդ տարբերակ կամ որոշում: Հոգեբաններու կարծիքով՝ նման լուծում չկայ: Բայց դուք կրնաք նախապէս գնահատել, որ

այդ հնարաւորութիւնը ինչ օգուտ կամ վնաս պիտի բերէ:

Ըստ հոգեբաններուն, գոյութիւն ունին կանոններ, որոնք կ'օգնեն ճիշդ որոշում կայացնելուն.

1) Յիշեցէք, որ գոյութիւն չունի իտէալական հնարաւորութիւն: Կատարելալ առաջարկը նման է վերացական նկարի. իւրաքանչիւրը այնտեղ կը տեսնէ որեւէ նոր եւ հետաքրքրական երեւոյթ: Իտէալական աշխատանքի մասին խօսելով՝ ամէն մէկը կ'ըսէ իր պատկերացումները ու ցանկութիւնները:

Մտածեցէք, որ ինչ կը ներդրէք «ճիշդ որոշման» հայեցակար-

## Երեք Բան, Որոնք Պարտադիր Պէտք Է Դանդաղ Ընել, Քանի Որ Յետոյ Դժուար Է Ուղղել Չանոնք

- 1) Ամուսնանալ
  - 2) Կառուցել
  - 3) Դաշուածք (tattoo) ընել
- 1- Բարեկիրթ տղամարդն ու կինը, որոնք ունին բարոյական ամօթի եւ բարոյական վախի զգացում, կ'ուզեն ամուսնանալ միայն մէկ անգամ, այլ ոչ թէ՛ քանի մը: Ատիկա փոխելը դժուար է: Հետեւաբար, ամուսնական արարքը պէտք է կատարուի մտածուած ու դանդաղ: 2- Պատուելու համար որեւէ արձան պէտք է կառուցել այնպէս, որ անիկա ըլլայ կատարելալ, իսկ տեղը, ուր պէտք է դրուի՝ անթերի տեսքով: Եթէ տեղը պատշաճ չէ, իսկ արձանը՝ ոչ կատարելալ, ուստի զանոնք ուղղելը բարդ պիտի ըլլայ: Հետեւաբար, տաճար կառու-

ցելու ժամանակ պէտք է շտապել, ըլլալ ուշադիր ու կարգապահ: 3- Երիտասարդները սովորութիւն ունին դաշուածքներ ընելու իրենց մարմնի տարբեր մասերուն, իսկ երբ կը ծերանան, կ'ուզեն ազատիլ անոնցմէ, բայց ատիկա արդէն բաւական դժուար է: Ատոր համար պէտք է առանց շտապելու եւ երկար մտածելէ ետք միայն դաշուածքներ ընել: Բաներ, որոնք պէտք է առանց յապաղելու ընել Տալ, բարոյական պահուածք, կեդրոնանալ: Հնարաւորութիւնը, որ ունիք այսօր, պէտք է յետաձգէք վաղուան: Ինչո՞ւ պէտք է յետաձգէք: Որովհետեւ դուք այսօր ողջ էք, իսկ վաղը կրնաք ողջ չըլլալ:

## Մթերքներ, Որոնք Մարտահրաւէր Կը Նետեն Ծերութեան

Գիտնականները բացայայտած են, որ ինչ պէտք է ուտել չծերանալու համար, կամ՝ 60 տարեկանին հանգիստ 40 տարեկանի տեսք ունենալ: Ժիշդ սնուիլը երիտասարդացնող ծիներուն հնարաւորութիւն կու տայ աշխատելու նոյնիսկ այն տարիքին, երբ անոնք սովորաբար կ'անջատուին:

Գիտնականները կ'առաջարկեն շեշտը դնել մարմնի ծերացման դէմ պայքարելու գործին օգնող սնունդի որոշ տեսակներու կանոնաւոր գործածման վրայ: Անոնց նշած տասը մթերքները, որոնք մարտահրաւէր կը նետեն ծերութեան.

- 1) Լեղի տուրմ - Խօսքը կը վերաբերի քաբաղի առաւելագոյն պարունակութեամբ տուրմին, որ օժտուած է մարմինը տարատեսակ վարակներէ պաշտպանելու ունակութիւններով:
- 2) Սաղմոն - Սաղմոնն ու ընդհանրապէս այն ձուկերը, որոնք կ'ապրին պաղ ջուրերու մէջ, պէտք է կանոնաւոր կերպով ընդգրկուած ըլլան մարդու սննդակարգին մէջ: Այդպիսի ձկնատեսակը կը պարունակէ օմեկա-3 հակաօքսիտանթներ, ինչպէս նաեւ կը հանդիսանայ հիւսուածքներու համար շատ կարեւոր սպիտակուցներու աղբիւր:
- 3) Կասիա - Այս համեմունքը ոչ միայն որոշ կերակրատեսակներու եւ ըմպելիքներու ինքնատիպ համ կու տայ, այլեւ կեանքը երկարացնելու համար բացառիկ միջոց է: Անիկա կը կարգաւորէ արեան մէջ շաքարի մակարդակը, կը բարելաւէ ուղեղի աշխատանքը ու կը բարձրացնէ ուշադրութեան կեդրոնացման մակարդակը:
- 4) Սունկեր - Թէեւ սննդակարգի մեծ մասին մէջ սունկերը կը բացակային, հաշուի առնելով անոնց դժուարամարս ըլլալը, գիտնականները սակայն կը պնդեն, որ սունկերու որոշ տեսակներ օգտակար ազդեցութիւն կը գործեն դիմադրողական համակարգին վրայ, կը բարելաւեն նիւթափոխանակութիւնը եւ կ'ամրապնդեն լեարդը: Անոնց մեծ մասը հարուստ է D կենսասնիւթով:
- 5) Զրային կրեա - Կրկին հարցը հակաօքսիտանթներու մէջ է, որոնք կը բարձրացնեն դիմադրողականութիւնը՝ վարակներու եւ վնասակար նիւթերու դէմ պայքարելու ունակութիւնը, կը չէզոքաց-

նեն մարմնի ծերացման գլխաւոր գործօնը:  
6) Եղեսպակի սերմեր - Եղեսպակը արդէն քանի մը հազար տարիէ կը համարուի բուժիչ խոտաբոյս, սակայն գիտնականները կ'առաջարկեն սնունդի մէջ կանոնաւոր կերպով ո՛չ թէ եղեսպակ օգտագործել, այլ՝ անոր սերմերը, որոնք հարուստ են օմեկա-3 ճարպաթթուներով, որոնք տառաջիորէն կը գործարկեն մարմնի մէջ երիտասարդացնող ծիները: Այդ սերմերուն մէջ E կենսասնիւթի եւ քալիումի բարձր խտութիւն կայ, որ անհրաժեշտ է ոսկրային հիւսուածքներու ձեւաւորման համար:  
7) Կանաչ թէյ - Թէյի կանաչ տեսակները բնական առատ հակաօքսիտանթներ կը պարունակեն, որոնք կը կանխեն ծերացումը եւ կը նպաստեն նիհարանալուն:  
Որոշ հետազոտութիւններ ցոյց կու տան, որ կանաչ թէյը կը հանդիսանայ մարմինը քաղցկեղէ պաշտպանող ծիներու լուրջ խթանիչ, օրինակ, կանանց մօտ՝ կրծքագեղձի, եւ տղամարդոց մօտ՝ շագանակագեղձի քաղցկեղի պարագային:  
Գիտնականները համոզուած են նաեւ, որ կանաչ թէյը կ'երիտասարդացնէ մաշկը ու կը բարելաւէ ուղեղի աշխատանքը:  
8) Կարմիր գինի - Ալքոհոլային խմիչքներէն միակը, զոր խորհուրդ կու տան կանոնաւոր կերպով օգտագործել, կարմիր գինին է: Անիկա կը դանդաղեցնէ մարմնի մէջ ճարպերու կուտակման գործընթացը:  
9) Կոճապղպեղ - Անիկա ճարպակալման դէմ պայքարի առաջամարտիկներէն է: Կը պարունակէ եթերաիւղեր, որոնք կը խթանեն ստամոքսահիւթի արտադրութիւնն ու կը լաւացնեն մարսողութիւնը: Անոր հաշուին մարմինը աւելի շատ ուժ կը ծախսէ ու կ'այլոյ՛ն ճարպաքլիջները, լաւացնելով մաշկի վիճակը:  
10) Թուրինջ - Թուրինջի օգտակարութիւնը ապացուցուած է շատ հին ժամանակներէ: Նոր հետազոտութիւնները միայն կը լրացնեն ստացուած տուեալները եւ ցոյց կու տան, որ թուրինջի ուժը ոչ միայն C կենսասնիւթ ունենալուն մէջ է, այլ նաեւ արեան մէջ ինսուլինի մակարդակը կարգաւորելու մէջ:  
Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

## Այո, Կայ Համազգային Նպատակների Իրագործման Օրակարգ

Շարունակուած էջ 2-էն

ուներնք, փաստօրէն:

Տիրապետող վահանէն շատ սխալ օրինակ է բերում իր տեսակէտն առաջ մղելու համար՝ նշելով, որ, դիցուք, Յեղասպանութեան հետապնդումը չի կարող թուրքիացի հայութեան համար օրակարգ լինել, քանի որ թուրքիացում այդ հարցի արծարծումն անցանկալի է: Նախ՝ չմոռանանք, որ թուրքիացում մնացած հայութիւնը սփիւռք չէ: Երբ Հրանտ Դինքին հարցրել են՝ չէ՞ք պատրաստուած հայրենիք տեղափոխուել, նա պատասխանել է՝ ես իմ հայրենիքում եմ, եկէ՛ք ձեզ ցոյց տամ իմ հայրենիքը: Միւս կողմից էլ՝ թուրքիացում Յեղասպանութեան թեմայի արծարծման, հայկական եկեղեցիները հայ համայնքին վերադարձնելու, ազգային ինքնագիտակցութեան արթնացման եւ այլ պրոցեսներ արդէն իսկ բաւականին խորքային են, եւ չի կարելի ասել, որ թուրքիացի հայութիւնը դուրս է մնացել Հայոց յեղասպանութեան ճանաչման եւ դատարարման համազգային օրակարգից:

Տիրապետող վահանէի տրամաբանութեամբ՝ հայաստանցիների հետ համազգային «նոյնական» օրակարգ կարող են ունենալ բացառապէս Հայաստանի հետ բարեկամական յարաբերութիւններ ունեցող երկրներում ապրող հայերը:

Դարձեալ պէտք է համաձայնեմ նրա հետ, որովհետեւ, երբ դիտարկում ենք մեր բարեկամ Վրաստանի օրինակը, պարզում է, որ Արցախի հարցում Վրաստանն ունի, մեր տեսանկիւնից, ամենաիտաւառակ դիրքորոշումը, բայց դա պատճառ չէ, որ վերահայրութիւնն ու Ջաւախքը, յանուն հայ-վրացական բարեկամական յարաբերութիւնների, դուրս մնան արցախեան համահայկական խնդրի հայանպաստ կարգաւորման օրակարգից:

Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման եւ սահմանի բացման հարցը, վստահաբար, համազգային օրակարգի հարց էր, եւ այն ընդգրկեց ողջ հայութեանը՝ ԱՄՆ-ից մինչեւ Ռուսաստան, Եւրոպայից մինչեւ Լիբանան, Իրանից մինչեւ Հնդկաստան եւ Աւստրալիա: Հաւանաբար, դեռ չի շոյում էք ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի համաշխարհային շրջազգայնութիւնը, հայութեան բո-

ղոքի ցոյցերն ԱՄՆ-ում, Ֆրանսայում, Պէյրութում, Ռուսաստանի քաղաքներում եւ այլուր: Այդ երկրների օրինապահ եւ օրինայարգ հայ քաղաքացիները, պարզուեց, համազգային նպատակների իրագործման հարցում այնքան էլ օրինայարգ եւ օրինապահ չեն, որովհետեւ բողոքում էին այն մեռելածին արձանագրութիւնների դէմ, որոնք ստորագրուել էին իրենց արտգործնախարարների անմիջական մասնակցութեամբ եւ դրողումով:

Խօսելով սփիւռքի բազմաշերտութեան, «կոտորակուած» լինելու եւ չգիտեմ էլ որ մեղքերի մասին՝ Տիրապետող վահանէն մէկ էլ եզրակացնում է, որ նոյնիսկ տարբեր երկրներում ապրող հայերի շահերը կարող են չհամընկնել եւ նոյնիսկ հակասել միմեանց: Սա արդէն պողաւոր սուտ է, եթէ չասեմ՝ խայտառակութիւն: Փաստօրէն, եթէ թրամփն ու Ասադը կուռում են, ամերիկահայերն ու սիրիահայերը՝ որպէս իրենց երկրների օրինապահ եւ օրինայարգ քաղաքացիներ, նոյնպէս պարտաւոր են կուռել եւ ոչ մի դէպքում չօգնել սիրիահայերին:

Փառք Աստուծոյ, Տիրապետող վահանէն ընդունում է, որ Հայաստանի եւ սփիւռքի, ինչպէս նաեւ սփիւռքի տարբեր հատուածների օրակարգերը կարող են որոշակի ժամանակահատուածներում համընկնել, ընթանալ նոյն հունով: Որպէս օրինակ՝ նա առաջ է քաշում հայապահպանութեան, ազգապահպանութեան, հայախօսութեան ամբարանում կամ վերակենդանացման հարցերը: Ըստ նրա, սակայն, համահայկական օրակարգի բաժանալ նոյնականացումը լուրջ սխալ է, յատկապէս, երբ սփիւռքը՝ ինքը, իր մէջ դեռ միասնական օրակարգի հարցում բացարձակ միատարր չէ եւ չի կարող լինել: Շատ ներողութիւն, եթէ հայութեանը համազգային նպատակների իրականացման օրակարգ պէտք չէ, ապա ինչո՞ւ ենք ուզում սփիւռքը հայ պահել, ինչո՞ւ ենք հայկական դպրոցներ հիմնում, հայերէն սովորեցնում: Մի՞թէ այդ ամէնը մեր համազգային նպատակների իրականացման համար չէ: Վերջին հաշուով, սփիւռքահայը ո՛չ գեղարուեստական արժէք է, որով պէտք է հիանալ, ո՛չ էլ թանգարանային նմուշ, որ ցուցադրենք:

«ՀՐԱՊԱՐԱԿ»

## Միջնորդների Ուղերձը Եւ Նախկինների Աղմուկը

Շարունակուած էջ 6-էն

որպէս կողմ, այլեւս պաշտօնական առաջարկ չի ներկայացուել, քանի որ Ռոբերտ Քոչարեանը, որպէս Հայաստանի ղեկավար այլեւս միանձնեայ էր բանակցում: («1998թ. Ռոբերտ Քոչարեանը դառնալով Հայաստանի նախագահ՝ բանակցային գործընթացում հանդէս եկաւ նաեւ որպէս Արցախի ներկայացուցիչ այն պարզ պատճառով, որ տեղեակ էր Արցախի նիստուկացից: Սակայն դա ճիշտ չէր: Դա մեր բացթողումն էր, միջազգային հանրութեան սխալն՝ ի դէմս Միւսկի խմբի, քանի որ դրանով խախտուել էր բուրգապեշտեան գաղաթնաժողովի ընդունած բանաձեւը», վիտալի Բալասանյան, Արցախի Անվտանգութեան խորհրդի քարտուղար):

Ի դէպ, Ղարաբաղի վերադարձը մի պահանջ է, որ անգամ Սերժ Սարգսեանն էր իր 2013 թուականի նախընտրական ծրագրում գրել. «Բնական եւ բանական կը լինի, որ Արցախն օր առաջ զբաղեցնի իր տեղը բանակցութիւնների սեղանի շուրջ, ուստի մեր ջանքերն ուղղուել ենք այդ հարցի շուտափոյթ լուծմանը»:

Ինչ վերաբերում է նախկին

իշխանաւորների այն պնդումներին, թէ այսօր հայկական կողմը ոչինչ չի անում վիճակի եւ Պետերբուրգի պայմանաւորութիւնների կեանքի կոչման համար, ապա արժէ յիշեցնել միայն, որ դրանց կեանքի չկոչման հարցում ընդհանրապէս պարզ չէ նոր իշխանութիւնների դերակատարութիւնը: Որովհետեւ դեռ մինչեւ յեղափոխութիւնն էին իրենք՝ նախկին իշխանութիւնները, բազմիցս շեշտում՝ այդ պայմանաւորութիւնները չեն կատարուած Աստուծանի պատճառով:

Յ.Գ. Աւելի քան 20 տարի ԼՂ հիմնախնդրի կարգաւորման հարցում տարուել է ստի քարոզչութիւն: Եւ նոր իշխանութիւնները հանրութեան հետ բաց խօսելու խնդիր ունեն, ե՛ւ տեղեկացնելու խնդիր:

Այսօր ունենք մի իրավիճակ, երբ նախ պէտք է եւ վաղուց ժամանակն է բաց խօսել բանակցութիւնների մասին, վերջապէս պաշտօնապէս գաղտնագրեծել բոլոր նախկին փաստաթղթերը՝ տարած քննարկ հարցում շահարկումները դադարեցնելու համար, եւ դրանից յետոյ հասկանալ՝ ի՞նչ ենք ուզում, ո՞ւր ենք հասել, եւ ինչպէ՞ս ենք շարժուած առաջ:

## Կանոններ, Որոնք Կ'օգնեն

Շարունակուած էջ 17-էն

գին մէջ եւ սահմանեցէք անոր յստակ չափանիշերը:

Օրինակ՝ աշխատանք փնտնելու ժամանակ հարց տուէ՛ք դուք ձեզի, որ ինչ կ'ակնկալէք: Ենթադրենք, որ ձեր համար իտէալական աշխատանքը դաշտերու մէջ թէ՛ հաւաքելն է: Ըստ հոգեբաններուն, եթէ նոր հնարաւորութիւնը կը համապատասխանէ ձեր պահանջները 60 տոկոսին, անհրաժեշտ է դիտարկել գայն: Եւ եթէ ձեզ կը հրաւիրեն թէ՛ փոխարէն սուրճ հաւաքելու, աւելի լաւ է համաձայնիլ, բայց հասկնալ, որ ամէն ինչ ձեր պատկերացուցածին նման պիտի չըլլայ:

2) Յստակացուցէ՛ք զգալիութեան սահմանները: Իւրաքանչիւր նոր որոշում կը փոխէ կեանքի սովորական ընթացքը: Նոյնիսկ եթէ ամէն ինչ կ'ընթանայ դէպի լաւը, նոր միջնորդտն ու նոր իրավիճակ կրնան անհանգստութիւն առաջացնել: Օրինակ, եթէ դուք ստացած էք ձեր երազած պաշտօնի բարձրացումը, դուք պէտք է հասկնաք, որ նոր աշխատանքը կը պահանջէ աւելի մեծ ջանքեր եւ աւելի շատ պատասխանա տուութիւն, այնպէս որ, հնարաւոր է, որ դուք աւելի քիչ ժամանակ տրամադրէք ձեր ընտանիքին:

Որպէսզի չչայտնուիք տհաճ իրավիճակի մէջ, խուսափեցէ՛ք հիասթափութենէ եւ մի անցնիք սահմանները, աշխատանքի հրաւերը ընդունելէ առաջ սահմանեցէ՛ք որոշ չափանիշեր. աշխատանքի հեռաւորութիւնը, աշխատավարձը, աշխատանքի տեսակը, զբաղուածութիւնը:

Իւրաքանչիւր կէտի համար յստակացուցէ՛ք սահման, որմէ՛ք դուք չէք ուզեր անցնիլ: Այսպէս աւելի դիւրին պիտի ըլլայ որոշում կայացնելը:

3) Մի սպասէ՛ք իտէալական հնարաւորութեան, գայն ստեղծե-

ցէ՛ք ինքնուրոյն: Եթէ դուք պարզապէս նստիք եւ սպասէ՛ք կատարեալ գործընկերոջ կամ երազանքի աշխատանքին, ամենայն հաւանականութեամբ պիտի հիասթափուիք: Ատոր փոխարէն փորձեցէ՛ք ինքնուրոյն քայլեր ընել: Եթէ կ'երազէք դառնալ գրող, առաջին հերթին ուղարկեցէ՛ք ձեր ստեղծագործութիւնները հրատարակչութիւններ: Կ'ուզէք գտնել ձեր գուզընկերը, հաստատեցէ՛ք ծանօթութիւններ: Մի սպասէ՛ք, որ ձեզ հրաւիրեն ժամադրութեան ձեր երազած ձեւով կամ ֆիլմերու նման:

4) Լսեցէ՛ք այն ազգանշանները, զորս կ'ուղարկէ ձեր մարմինը: Հոգեբանները կը կարծեն, թէ մարմինը մեզի ազգանշաններ կու տայ, երբ մենք որեւէ բան չենք ըներ պէտք եղածին նման:

Օրինակ, եթէ դուք յաճախ կը գլխաք քնոտ, թոյլ եւ յոգնած, խնդիրը պայման չէ որ միայն ձեր յագեցած օրը ըլլայ: Հնարաւոր է, որ դուք պարզապէս չէք սիրեր այն՝ ինչ կ'ընէք:

Եթէ աշխատանքը կամ յարաբերութիւնները ձեզ հաճոյք կը պատճառեն, դուք ֆիզիքապէս եւս լաւ պիտի զգաք: Հոգեբանը կը պատմէ, որ ամէն անգամ, երբ պէտք է կարելոր նախագիծ մը սկսիլ, ինքը կ'անհանգստանայ այնպէս, ինչպէս փոքրիկը, որ պիտի կենդանաբանական այգի երթայ:

5) Սկսեցէ՛ք փոքր քայլերէ: Միւսն է ձեր երազանքի աշխատանքով ամբողջովին տարուելը, ուսումնասիրեցէ՛ք գայն եւ սկսեցէ՛ք փոքր քայլերէ: Եթէ կ'ուզէք դառնալ աշխարհի ախոյեան, ուրեմն պէտք չէ սկսիլ միանգամայն այդ մրցաշարէն:

Սորվեցէ՛ք ձեր ոլորտի բոլոր հնարքները, ուսումնասիրեցէ՛ք նոր հնարաւորութիւնները եւ ըրէ՛ք փոքր քայլեր:

Եթէ ունիք մեծ սպասումներ առաջին իսկ օրէն, կրնաք մեծ հիասթափութիւն ապրիլ:



**Legacy Realty**  
**Nick Karasarkisian**  
 Broker - CalBRE # 01022153  
 2275 Huntington Dr., #117  
 San Marino, CA 91108  
 Phone: 213.706.9990  
 e-mail: nickkarasarkisian@gmail.com  
 www.legacyrealtyca.com




**Save Support Sustain**  
 Syrian Armenian Relief Fund  
 P.O. Box 1948  
 Glendale, CA 91209-1948  
 www.syrianarmenianrelieffund.org



### Կարպիս Պալըզեանի Յիշատակին

«Նոր վերնատուն» ակումբի անդամները սրտի խոր ցաւով իմացան ակումբի հիմնադիր, շատ սիրուած եւ յարգուած պրն. Կարպիս Պալըզեանի մահուան գոյժը, գոր սուգի մատնեց իր կողակիցը, ընտանիքը եւ շրջապատը:

Տակաւին դժուար է համոզուիլ, որ առյաւէտ կը բաժնուի իր սիրելիներէն եւ բարեկամներէն, գիտակցելով այն իրողութեան, որ բոլորս անխտիր ժամանակաւոր բնակիչներ ենք, բայց նաեւ այն իրողութեան, որ իր ձգած քաղցր յիշատակը պիտի շարունակէ մնալ մեր սրտերուն մէջ:

Հալէպէն սկսեալ մինչեւ Լոս Անձելէս՝ առնելով պատասխանատուութիւններ եւ օգտաշատ ծառայութիւններ՝ Կարպիս Պալըզեան իր կեանքը նաւարկեց դիմագրաւելով զանազան խոչընդոտներ պաղարիւնութեամբ եւ առանց վհատելու, շարունակեց իր կեանքի մշտակատար սահանքը եւ հերոսաբար յաղթահարելով բազում արհաւիրքները հասաւ իր նպատակին՝ կազմելով հայկական օճախ որպէս ազգային պարտականութիւն եւանոր տոհմիկ, հայաբոյր մթնոլորտը իր վայելքը նկատելով:

Սիրելի Կարպիս, հողը թեթեւ գայ վրադ. Կլենտէյլի հողը գիտէ, որ բացակայութեանդ շատերը պիտի փնտռեն քեզ, ու թէեւ բացակայ, քու ժպտուն հաղորդականութեամբ միշտ ներկայ պիտի ըլլաս քեզ ճանջող բոլոր մարդկանց յիշողութեան մէջ:

Մեր ակումբի անունով խորագրաց ցաւակցութիւններ կը յայտնենք իր կողակիցին՝ ազնուափայլ տիկին Շաքէին, ընտանիքին եւ հարազատներուն:

Աստուած հոգին լուսաւորէ, խունկ եւաղօթք իր յիշատակին:  
Նազարէթ Գոզաճեան  
«Նոր վերնատուն» ակումբ



### ՅԱԲԱԿՑԱԿՆ

**ԿԱՐՊԻՍ ՊԱԼՂԵԶԵԱՆԻ** մահուան տիտղոս առիթով «Նոր վերնատուն» խմբակցութիւնը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի բոլոր հարազատներուն եւ առ այդ փոխան ծաղիկապակի կը կատարէ հետեւեալ նուիրաթուածութիւնները:

«Մասիս» շաբաթաթերթին	\$150
Հալէպի Կիլիկեան Սանուց Միութեան	\$150

### Հարսանիք Ձանգեզուրի Շուճուխի Գիւղ

Շարունակուած էջ 16-էն

պիտի աւետէր Սողոմոն իմաստունը իր առականութեամբ, բարի ու երջանիկ օրերը, արեգակի լոյսը կեանքի առեղծոճածի տօնախմբութիւններն էն: Շատ եմ գրել Ձանգեզուրի հրաշագեղ բնութեան ու նրանց մարդկանց վեհանմտութեան ու քաջութեան, մեր ընտանիքի սակաւ տարիների կեցութեան մասին, այ այն իմ կեանքի յուշերի ոչ միայն տօնն է, այլ նաեւ տօնախմբութիւնն է:

Սակաւացել էին Բոխի ծառերը, Ատրպէյջանի իշխանութիւնը չէր արտօնել ճանապարհի ծառեր: Գործարանի արտադրական սարքերը տեղափոխել էին մօտակայ «Չայգամ»-ի ձոր, վրաններ լարել բանուորների ու նրանց որոշ ընտանիքների անդամների կեցութեան համար: Բանաւանում նուազել էր բնակչութիւնը, տեղի աշխուժ կեանքը: Հօրաքոյրս «Չայգամ»-ի գնացել, Արմենակ հայրս տեղի ու շրջանի գիւղերի բժշկական բուժակետի պատասխանատու հիւանդապահ, ես էլ հաշուապահութեան աշխատակից: Շուճուխի դպրոցի հայկական դասարաններում դադարեցուցել էին Անգլիերէն ու Ռուսերէն լեզուների դասաւանդումը: Ռուսերէն դասաւանդել էր գործարանի կուսակցական կոմիտէի քարտուկար Արամ Սելիկեանի կին Ռոզար: Նրանք փոխադրուել էին Գորիս քաղաք, յետագայում Սելիկեանը կուսակ-

ցական ու այլ պատասխանատու աշխատանքներ ղեկավարել: Հայրս Գորիսում տուն էր վարձել, որ փոքրերը տեղի դպրոց հաճախէին: Դպրոցից տուն վերադարձի ճանապարհին, Չայգամ մի տղայ մօտեցել իրենց, «Սիմա» կանչել, վախից շտապել էին տուն հասնել: Նոյն տղան յաճախ հանդիպել իրենց, փորձել խօսել Սիմայի հետ: Տղայի ակներում սիրոյ բոսոր լոյս էր վառուում, նրա ճառագայթները խոցել էին Սիմայի սիրտը: Տղան հօրը խոստովանել, որ մօտիկ դպրոց հաճախող «Թագա Կալան» աղջկան էր սիրում, ուզում նշանուհի նրա հետ:

Այդ տղայի հայրը՝ բնիկ գորիսեցի Քուստունց-Սարգիսեան Լեւոնն էր: Իմանալով այդ աղջկայ հայրը Գորիսում էր, գնացել հանդիպելու նրան: Հայր Արմենակ սիրով ընդունել, պատմել իրենց երկրի մասին, որ իրենք էլ լեռնական մարդիկ էին, իրենք էլ մի աւագակաբարոյ ցեղի տաճիկ մարդկանց հետ յաղթական կռիւ մղել, դէպքերի բերումով եկել նախնիների երկիր՝ Հայաստան, Չանգեզուր աշխարհ: Լեւոնն էր պատմել իրենց աշխարհի մասին, պատմել, իրենց աշխարհում էլ նոյն անօրէն տաճիկ մարդկանց դէմ կռիւ տուել, վճռուել նրանց իրենց աշխարհից: Լեւոն շարունակելով խօսքը, ասել, որ իր աւագ տղայ Ասպետ սիրում է Սիմային, խնդրել հեռու լեռներից իրենց քաղաք եկած «Թագա Կալան» ընտանիքի դուստրը իր հարսը լինէր, շրջանում առաջին ամուսնութիւնը «Թագա Կալան» ընտա-

նիքի ու Չանգեզուրի լեռնական ընտանիքի գաւակների միջեւ: Արմենակ զարմանք յայտնել, թէ նրանք ինչպէս պիտի կարողանային յարմարիլ տարբեր լեռների մարդկանց համատեղ կեցութեան բարքերին եւ թէ ինք կը հայցէր նաեւ ընտանիքի միւս անդամների համաձայնութիւնը:

Կիրակի օր էր, «Չայգամ»-ի գործարանի մարդիկ եկել էին բանաւան, իրենց տնտեսութիւնների հոգածութիւնը ապահովելու: Իրարանցում էր բանաւանում, Արմենակի տան տաղաւարի առաջ սեղանիկներ էին, նրանց վրայ շիշեր, տարբեր ուտեստներ, բանաւանի մարդիկ Քարահունջի օղիի շիշեր, ռուս մարդիկ շերտած խոզի աղած «Սալ-ճարպ» բերում դնում սեղանիկներին, հացթուխ Փաշան նոր թխած ռուսական «Բոքոն» հաց բերել, բանաւանում հացի անուշ բոյր էր...: Չանգեզուրի լեռներ եկած «Թագա Կալան» Արմենակի դուստրի հարսանիքն էր, երկիր վերադարձած հեռու հայերի ու բնիկ հայերի գաւակների հարսանիք:

Բանաւան իջնող ինքնաշարժերի խճուղիում հանրակառք էր կանգ առել, մարդիկ դէպի բանաւան եկել: Գործարանի պահպանութեան պետ, Չանգեզուրցի քաջագուն Արշակ Տայի կանչել էր՝

-Ո՞վ էք դուք, ինչո՞ւ էք բանաւան եկել... կանգ առէք:

Որսորդական հրացանից երկու կրակայթ արձակել: Նրանցից մի տղամարդ առաջ եկել,

-Արշակ Տայի, եկել ենք բանաւանից Գորիս հարս տաննք:

-Բա՛, հենց այդպէս, յարել էր Արշակ Տային:

Նրանցից մի Չայգամ տղայ, գառան պախուրցից բռնած, կանգնել նրա դիմաց,

-Արշակ Տայի, այս գառն ենք բերել, բերկրութիւն լինէր հարսանիքին, խաղաղութիւն «Թագա Կալան» ու բնիկ Գորիսեցի ընտանիքներին, «մրրկաւ» բաժանուած միացման խրախճանք լինէր մեր ցեղի արեւմտեան ու արեւելեան կողմերի մարդկանց: Թոյլ տուր բանաւանի բացատ գային հարսնետրները: Բանաւանի մարդիկ դիմաւորել նրանց, առաջնորդել «Թագա Կալան» Արմենակի տաղաւարի բացատ: Ի պատիւ հարսանիքի Արշակ Տային նորէն համազարկ տուել, գորիսեցիներին ու բանաւանի մարդկանց հրաւիրել սեղանիկների մօտ: Արմենակն էր բացատ ելել՝ բարի գալուստ մաղթել նրանց: Այսպէս էր խօսել Արմենակը:

-Իմ դուստրի հարսանիքն է այսօր, տասը տարիներ առաջ թուրքի հրամանի տակ չլինելու համար թողել էինք մեր լեռների լանջի շէներ, որտեղ երկու հազար տարիներ առաջ մեր ցեղի Մեծն Տիգրանի յաղթական բանակների հետ եկել բնակել այնտեղ: Թուրքի հրամանի տակ չլինելու համար լքել մեր շէները, գնացել հիւրընկալ Արաբի երկիր: Բացուել էին հայոց երկրի դուռերը, հայրենիք կանչում էր մեզ, եկանք հայոց աշխարհի այս լեռների երկիր, ահա բանաւանի այս մարդիկ որպէս հարազատներ ընդունեցին մեզ: Համաձայնեցինք, որ մեր դուստրը հարս լինէր բնիկ Գորիսեցի Քուստունց-Սարգիսեան Լեւոնին, Հեռու Մուսսուրի Լեւոնի աղջկայ ծիները թող Չանգեզուրի լեռների տղայի ծիները հետ միանան, նոր տեսակի հայ մանչեր լինեն: Ողջ լե-

րուք, խմէ՛ք ձեր ամուր երկրի թուփի ծառերի պտուղներից քամուած բարկ օղի, խմէ՛ք, ուրախանաք այնքան, որ մոռանաք ինչու Շուճուխի բանաւան էիք եկել:

Արմենակ թմկահարին յուշել էր իրենց երկրի մենապարի կշռոյթը: Արմենակ իրենց երկրի մենապարն էր բռնել, դէմքն էր կարծես իրենց հեռու աշխարհին նայել, կարծես իրենց հազար հազար ամեայ Սօսի ստուերում վարդավառի տօնին պար էր բռնում, ատրճանակի հարուածներով սօսի ծառին լոյս վառում: Հօրաքոյր Նեկտար իրենց երկրի «Լու լու լու» կանչն էր բարձր հնչել: Գորիսեցի թմկահարը շարունակել պինդ զարկել թմբուկը: Գորիսեցիները իրենց շուրջ պարն էին բռնել, շարքի եզրին Քուստունց-Սարգիսեան Լեւոնն էր կարմիր այլալուխը թափահարելով պարին ռիթմ ուղորդել: Բանաւանում առաջին հարսանիքն էր, ամբողջ բանաւանն էր բացատ ելել, «Քոչարի», շուրջպար բռնել, պինդ տոփել գետինը, որ ամրանային իրենց լեռները, որ իրենց հետ ամուր կանգնէին թշնամու դէմ կռուին: Ռուսներն էին բանաւանի մարդկանց հետ պար բռնել, իրենց պարերը բռնել: Գառի խորովածն էր սեղաններին, օղի, Քարահունջի օղի խմեցին, հարբեցին, չէ, իրենք սովոր էին այդ օղուն, այն իրենց չէր հարբեցնի, քաղաքի մարդկանց էր այն զգեստում...:

Արմենակ, դուստրին թեւանցուկ արած բացատ եկել, «Օրհնում եմ ձեզ» կանչել, դուստրին տարել փեսացու Ասպետի հետ թեւանցուկ անելու: Արշակ Տային էր հրացանի համագրկով շնորհաւորել նրանց միութիւնը: Օղու շիշեր էին վերել նետել, թմկահարը թմբուկ զարկել, գրկախառն օղի խմել, շարունակել պարելպարել, իրենց երգերը հնչել:

Քուստունց-Սարգիսեան Լեւոնն, իր օրհնութիւնն էր յղել նորապսակներին, նրանք լինէին իրենց երկրի բարքերին աւանդապահ այր ու կին: Բարձր կանչել, որ իր Քուստունց-Սարգիսեան գերդաստանի տոհմի ազգանունն է շնորհում իր հարսին, որ նա մի մասնիկը լինէր իրենց գերդաստանի: Միջօրէ էր, խնդրել թոյլ տալ վերադառնալ իրենց շէն՝ այնտեղ էլ հարսանիք անէին, Գորիսն էր իրենց սպասում:

Մայրիկ Չարուհի, փոքրերի հետ եկել դուստր Սիմային ճանապարհ ղնելու: Գրկել նրան, լացել, լացել էին փոքրերը, բաժանուած էին համատեղ կեանքից: Բոլոր հարսանիքների հարս գնացողները լացում են, այն ցաւի լաց չէ, կենդանական աշխարհի գահին բազմած մարդու սիրոյ զգացումի գեղումի արտայայտութիւնն է: Բնութիւնը, եթէ նրան չխանգարէին, իրեն հաւասարակշռում է, մօտաւորապէս հաւասար են ծնունտ աղջիկ ու տղայ մանչեր: Տղաներին կեանքի ինքուրոյն ճանապարհ են առաջնորդում, «սրտի հատոր» աղջիկներին յանձնում ուրիշին, ծնողք մտահոգում են ինչպէս կը լինէր նրանց կեանքը... այդ ուրիշներ «իմս» ասում նրանց, «իմի» պէս վարում նրանց հետ, լաւ է, որ քաղաքակիրթ երկրներում նրանք այլեւս «իմս» չեն համարուում, զանցառուները օրէնքի խտութեամբ պատճառում...: Բնութիւնը նրանց հաւասար ստեղծում... ոչ «իմս», ոչ «քուկ»:

# ՄԱՐՁԱԿԱՆ

## «Արսենալ»-ը Կարեւորագոյն Յաղթանակ Տարաւ «Մանչեսթեր Եունայթըտ»-ի Նկատմամբ



Պրեմիեր լիգայի 30-րդ տուրի կեդրոնական խաղում «Արսենալ»-ը սեփական յարկի տակ ընդունեց «Մանչեսթեր Եունայթըտ»-ին ու վստահ յաղթանակ տարաւ՝ 2:0 հաշուով:

Խաղի հաշիւը 12-րդ րոպէին հեռահար հարուածով բացեց Ջական, 69-րդ րոպէին իր թիմի առաւելութիւն կրկնապատկեց Օբամեյանգը՝ յստակ իրացնելով 11-մեթրանոց հարուածը:

Այս յաղթանակից յետոյ «գինագործներ»-ը շրջանցեցին «կարմիր սատանաներ»-ին ու 60 միաւորով 4-րդ հորիզոնականում են: Սուլշերի սաները ունեն 58 միաւոր ու 5-րդն են:

«Արսենալ» - «Մանչեսթեր Եունայթըտ» խաղից առաջ լոնտոնեան ակումբի թուիթթեան էջը գրառում էր կատարել, որում շուտափոյթ ապաքինում եւ վերադարձ է ցանկացել թիմի կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեանին: Ըստ նախնական տուեալների, հաջ ֆուտպոլիստը նախախաղային մարզումը բաց է թողել մէջքի ցաւերի պատճառով:

## «Մանչեսթեր Սիթի»-ին Հերթական Յաղթանակը Տօնեց

Անգլիական Պրեմիեր Լիգայի 30-րդ տուրի շրջանակում «Մանչեսթեր Սիթի»-ն տանը 3:1 հաշուով վստահ յաղթանակ տօնեց «Ուոլթֆորդ»-ի նկատմամբ:

«Քաղաքայիններ»-ի կազմում հեթորիկ ձեւակերպեց Ռահիմ Ստերլինգը: Հիւրերի միակ կողմը խփեց Ժերար Դելոֆեուն:

Այս յաղթանակից յետոյ մանչեսթերցիները վաստակեցին 74 միաւոր եւ շարունակում են մնալ առաջին հորիզոնականում:

## Ախոյեանների Լիգա. Յայտնի է Շաբաթուայ Լաւագոյն Ֆուտպոլիստը

«Այաքս»-ի կիսապաշտպան Դուշան Տադիչը ճանաչուել է Ախոյեանների լիգայի շաբաթուայ լաւագոյն ֆուտպոլիստ:

«Ռեալ»-ի դեմ պատասխանում խաղում «Այաքս»-ը յաղթեց 4:1 հաշուով:

Այդ հանդիպմանը 30-ամեայ խաղացողը դարձաւ կոլի եւ երկու կոլային փոխանցման հեղինակ:



## «Եուվենթուս»-ը Համաձայնութեան է Եկել Գուարդիոլայի Հետ

«Եուվենթուս»-ը քայլեր է ձեռնարկում «Մանչեսթեր Սիթի»-ի գլխաւոր մարզիչ Խոսեպ Գուարդիոլային թիմ հրաւիրելու համար:

«Ինձ յայտնի է, որ Գուարդիոլայն արդէն նախնական պայմանագիր է ստորագրել «Եուվենթուս»-ի հետ: Խօսքը 4 տարուայ համաձայնագրի մասին է: Այդ տեղեկութիւնն այն նոյն աղբիւրից է, որն առաջինն էր յայտնել Կրիշտիանու Ռոնալդուի՝ թուրինեան ակումբ տեղափոխութեան մասին», - Radio CRC-ի եթերում յայտնել է լրագրող Լուիջի Գուեյլան:

Յիշեցնենք, որ սպանացի մասնագէտի պայմանագրի ժամկէտը «Քաղաքայիններ»-ի հետ լրանում է 2021 թուականի ամրանը:

## «Ռեալը» 350 Միլիոն Եւրօ Կ'առաջարկի Նեյմարի Համար

Մադրիդի «Ռեալը» ամրանը 350 միլիոն եւրօ կ'առաջարկի ֆրանսական ՊՍԺ-ին պրագիլացի յարձակուող Նեյմարի համար, հաղորդում է Sport.es-ը:

Արքայական ակումբը պատրաստ է Նեյմարին վճարել տարեկան 45 միլիոն եւրօ աշխատավարձ:

Յիշեցնենք, որ մի քանի օր առաջ Նեյմարը մեկնաբանել էր «Ռեալ» տեղափոխուելու մասին լուրերը:

## Վագդէն Թեւանեանը՝ Ըմբշամարտի Եւրոպայի Ախոյեան



Սերբիայի Նովի Սադ քաղաքում անցկացուող ըմբշամարտի Եւրոպայի մինչեւ 23 տարեկանների առաջնութիւնում Հայաստանի ազատ ոճային ըմբիշ Վագդէն Թեւանեանը հռչակուեց ախոյեան:

65 կգ քաշային կարգի եզրափակիչում հայ մարզիկը մրցեց վրացի էդեմի Բոլկվաձէի հետ եւ յաղթեց 2:1 հաշուով: Նա նուաճեց Հայաստանի միակ ոսկէ մետալը, քանի որ մնացած ըմբիշները դուրս էին մնացել նախնական փուլից:

Հայաստանը ներկայացնող իրաւաւոր Պապիկեանը նուաճեց պրոնզէ մետալ: Երրորդ տեղի համար գոտեմարտում մեր 74 կգ քաշային ըմբիշը 10:3 հաշուով վստահ յաղթեց Գերմանիան ներկայացնող էդուարդ Տատարինովին:

## Արտերկրում Հանդէս Եկող Ֆուտպոլիստներ Եւ Հրաւիրուել Ազգային Հաւաքական

Մարտի 23-ին եւ 26-ին Հայաստանի ազգային հաւաքականը կ'անցկացնի Եւրօ-2020-ի ընտրական փուլի J խմբի առաջին երկու տուրերի հանդիպումները՝ մրցելով համապատասխանաբար Պոսնիա եւ Հերցեգովինայի եւ Ֆինլանդիայի հաւաքականների հետ:

Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի կայքից տեղեկանում ենք, որ Հայաստանի ազգային հաւաքականի գլխաւոր մարզիչ Արմէն Գիւլլըու-դաղեանցն արդէն հրապարակել է Հայաստանի ազգային հաւաքականի՝ արտերկրում հանդէս եկող ֆուտպոլիստների անունները, որոնք ստացել են նախապատրաստական հաւաքին մասնակցելու հրաւեր:

Արսէն Բեգլարեան, «Լուչ» (Բելառուս)  
 Վարազդատ Հարոյեան, «Ուրալ» (Ռուսաստան)  
 Անդրէ Չալըշըր, «Գիթթեթորգ» (Շուեդիա)  
 Կամօ Յովհաննիսեան, «Ժետիսու» (Ղազախստան)  
 Յովհաննէս Համբարձումեան, «Էնոսիս Պարալիմնի» (Կիպրոս)  
 Հենրիխ Միխիթարեան, «Արսենալ» (Անգլիա)  
 Գէորգ Ղազարեան, «Շաւիշ» (Պորտուգալիա)  
 Սարգիս Աղամեան, «Յան Ռեզենսբուրգ» (Գերմանիա)  
 Արաւ Օզբիլիս, «Վիլլեմ-II» (Հոլանդիա)  
 Տիգրան Բարսեղեան, «Կայսար» (Ղազախստան)  
 Էդգար Բաբայեան, «Հոբբո» (Դանիա)  
 Ալեքսանդր Կարապետեան, «Պրոգրես Նիդերկորն» (Լիւքսեմբուրգ)  
 Նորբերտո Բրիասկօ Բալեկեան, «Ատլետիկո Ուուական» (Արժենտինա)  
 Յուրա Մովսիսեան - առանց ակումբի

## Մեսսին ԱԱ-2018-ից Յետոյ Առաջին Անգամ Հրաւիրուել է Արժենտինայի Հաւաքական

«Բարսելոնայի» յարձակուող Լիոնել Մեսսին հրաւիրուել է Արժենտինայի ազգային հաւաքական՝ մասնակցելու Վենեսուելայի ու Մարոկոյի դէմ ընկերական խաղերին, հաղորդում է Oie-ն:

31-ամեայ ֆուտպոլիստն Արժենտինայի հաւաքականում հանդէս չի գալիս Ռուսաստանում կայացած աշխարհի առաջնութիւնից յետոյ: ԱԱ-2018-ի 1/8 եզրափակիչում արժենտինացիները 3:4 հաշուով պարտուճել էին Ֆրանսայի հաւաքականին:

Մեսսին Արժենտինայի հաւաքականի բոլոր ժամանակների լաւագոյն ումբարկուն է: Ազգային թիմում նա անցկացրել է 128 հանդիպում եւ խփել 65 կոլ:



«Իւրաքանչիւր ֆուտպոլիստ, որին ասոցացնում են «Ռեալի» հետ, ուրախ կը լինի խաղալ այդ ակումբում: Ես երջանիկ եմ Փարիզում, սակայն ոչ ոք չգիտի, թէ ինչ է ինձ սպասուում ապագայում: «Ռեալը» հրաշալի ակումբ է, լաւագոյններից մեկն աշխարհում», - ասել էր 27-ամեայ ֆուտպոլիստը:

Նեյմարը 2013-2017 թուականներին խաղացել է «Բարսելոնայում» եւ ՊՍԺ է տեղափոխուել 222 միլիոն եւրօյի դիմաց: